

© Association of Judges of the RA,
http://www.judge.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en. [Translation already published in Collection of judgments of ECHR in Volume 7, 2010.] Permission to re-publish this translation has been granted for the sole purpose of its inclusion in the Court's database HUDOC.

CASE OF YANKOV v. BULGARIA - [Armenian Translation] by the Association of Judges of the RA

ՅԱՆԿՈՎՆ ԸՆԴԴԵՄ ԲՈՒԼԴԱՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ

2003թ. դեկտեմբերի 11-ի վճիռը

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

ՓԱՍՏԵՐ

I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

9. Դիմողը՝ պրն Թոդոր Անտիմով Յանկովն ազգությամբ բուլղարացի, ծնվել է 1943 թվականին և ապրում է Պլովդիվում:

A. Դիմողի դեմ հարուցված քրեական վարույթները

1. Նախնական քննություն

10. Դիմողը եղել է գյուղատնտեսական ներդրումային ֆոնդի և ֆինանսական ընկերության գործադիր տնօրեն: Նա նաև տնտեսագիտություն է դասավանդել այն բնագավառում, որտեղ նա դոկտորական աստիճան է ունեցել:

11. 1996 թվականի մարտի 11-ին նրա և մի քանի այլ անձանց դեմ Պլովդիվի շրջանային հանրային դատախազի կողմից նախնական քննություն (թիվ 300/96) է սկսվել՝ կապված մի շարք ֆինանսական գործարքների հետ: Դիմողին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 282-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝ իր և այլ անձանց համար անօրինական եկամուտ ստանալու նպատակով իր մասնագիտական պարտականությունների խախտման համար:

12. Քննության ընթացքում մեղադրանքը մի քանի անգամ փոփոխվել է: Ընդհանուր առմամբ, ութ անձի մեղադրանք է առաջադրվել:

13. Քննության ընթացքում, որը տևել է մեկ տարի և մոտ երկու ամիս, քննիչը հարցաքննել է 47 վկա, զննել է բազմաթիվ ֆինանսական և բանկային փաստաթղթեր, լրագրագրեր, ինչպես նաև ուսումնասիրություններ է իրականացրել:

14. 1997 թվականի մայիսի 5-ին նախնական քննությունն ավարտվել է և գործն ուղարկվել իրավասու դատախազին:

15. 1997 թվականի հուլիսի 1-ին դատախազը 32 էջով մեղադրական եզրակացություն է ներկայացրել Պլովդիվի շրջանային դատարան՝ կցելով փաստաթղթերի 20 փաթեթ:

2. Դատաքննությունը

16. Առաջին նիստը տեղի է ունեցել 1997 թվականի սեպտեմբերի 17-30-ը: Շրջանային դատարանը լսել է ամբաստանյալին, մի քանի վկաների և փորձագետների: Որոշ վկաներ չեն ներկայացել: Երկուստեք՝ դատախազը և պաշտպանության կողմը խնդրել են հետաձգել նիստը:

17. Վարույթը վերսկսվել է 1997 թվականի նոյեմբերի 25-ին: Շրջանային դատարանը լսել է մի քանի վկաների: Տասն այլ վկաներ պատշաճ կերպով կանչված չեն եղել դատարան և այլոք, թեև կանչված եղել են, սակայն չեն ներկայացել: Նիստը հետաձգվել է մինչև 1998 թվականի հունվարի 7-ը:

18. 1997 թվականի դեկտեմբերի 1-ին դատարանը, դռնփակ նիստում, բավարարել է փորձագետներին լրացուցիչ հարցեր տալու վերաբերյալ ամբաստանյալներից մեկի պահանջը: 1998 թվականի հունվարի 5-ին փորձագետները ներկայացրել են իրենց եզրակացությունը:

19. Վարույթը շարունակվել է 1998 թվականի հունվարի 7-ին և 8-ին: Դատարանը հետաձգել է նիստը, քանի որ մի քանի վկա չեն ներկայացել, և կարգադրել է լրացուցիչ ֆինանսական եզրակացություն նախապատրաստել:

20. 1998 թվականի ապրիլի 9-ին նշանակված նիստը դիմողի վատառողջ լինելու պատճառով հետաձգվել է մինչև 1998 թվականի հուլիսի 6-ը և ապա՝ մինչև 1998 թվականի հոկտեմբերի 19-ը:

21. 1998 թվականի հոկտեմբերի 19-ին Շրջանային դատարանն անցկացրել է իր վերջին նիստը: Այն լսել է կողմերի վերջին ելույթները:

22. 1998 թվականի հոկտեմբերի 30-ին Պլովդիվի շրջանային դատարանը դիմողին մեղավոր է ճանաչել համապատասխան ֆինանսական կարգավորումների խախտմամբ արտասահման դրամի փոխանցում կարգադրելու համար: Փոխանցումների իրականացումը կարգադրվել է առանց օրինական նպատակի հիմնավորման և ի շահ ֆինանսական ընկերության վստահողների, ովքեր նրա կողմից ամբողջությամբ չեն բացահայտվել: Դիմողը մեղավոր է ճանաչվել նաև այն բանում, որ, ունենելով լիազորված անձի իրավասություն՝ ի խախտումն իր, որպես ֆինանսական ընկերության կառավարչի, պարտականությունների այլ անձի տրամադրել է լիազորությունների լայն շրջանակ: Մեղադրանքների մնացած մասով դիմողն արդարացվել է և դատապարտվել հինգ տարի ժամկետով ազատազրկման:

23. Շրջանային դատարանի դատավճռի պատճառաբանությունները դիմողին տրամադրվել են 1999 թվականի փետրվար ամսի անհայտ մի օր:

24. Վարույթների ընթացքում գործը մի քանի անգամ անհասանելի է եղել, քանի որ այն հաճախ ուղարկվել է իրավասու դատարան նախնական կալանավորման դեմ դիմողի և մյուս մեղադրյալների բողոքների քննության համար: Պրակտիկայում, երբ նման բողոք է ներկայացվում, գործը բողոքի հետ մեկտեղ է միասին ուղարկվում:

25. Վարույթների ընթացքում շրջանային դատարանը և, ավելի ուշ՝ Ռեզիդնալ դատարանը (տե՛ս ստորև) ստիպված է եղել խնդրել ոստիկանության աջակցությունը վկաների հասցեները պարզելու և նրանց դատարան բերելու համար:

3. Վերաքննիչ վարույթները

26. 1998 թվականի նոյեմբերի 19-ին դիմողը բողոքարկել է իրեն մեղավոր ճանաչելը և դատապարտելը:

27. 1999 թվականի դեկտեմբերի 6-ին կայացել է Պլովդիվի ռեզիդնալ դատարանի առաջին նիստը, որը բողոքաբերներից մեկի առողջական վիճակի պատճառով հետաձգվել է մինչև 2000 թվականի մարտի 13-ը:

28. 2000 թվականի հունիսի 5-ին Ռեզիդնալ դատարանը բեկանել է դիմողին մեղավոր ճանաչող և դատապարտող դատավճիռը և գործը վերադարձրել է նախնական քննության:

4. Վերսկսված նախնական քննությունը

29. Պլովդիվի ռեգիոնալ հանրային դատախազի գրասենյակը գտնելով, որ Ռեգիոնալ դատարանի դատավճիռը ոչ պարզ կամ սխալ է, դրա դեմ ցանկացել է բողոք ներկայացնել կամ դրա մեկնաբանություն պահանջել: Նրանք վիճարկել են համապատասխան ժամկետային սահմանափակման հարցը, որը դատախազական մարմինների կողմից ներկայացվել է Գերագույն վճռաբեկ դատարան: 2000 թվականի նոյեմբերի 27-ին այդ դատարանը մերժել է դատախազի պահանջը:

30. Դրանից հետո գործով ոչինչ չի արվել մինչև 2002 թվականի նոյեմբերը՝ կողմերից տեղեկություն ստանալու վերջին ժամկետը: Դիմողի գործով նախնական քննությունը դեռևս գտնվել է Պլովդիվի դատախազական մարմինների վարույթում:

B. Դիմողի կալանավորումը

1. Կալանք նախնական քննության ընթացքում

31. 1996 թվականի մարտի 12-ին դիմողը թիվ 300/96 քննության կապակցությամբ ձերբակալվել է և նախնական կալանքի տակ է պահվել քննիչի որոշման հիման վրա, որը հաստատվել է դատախազի կողմից:

32. 1996 թվականի մարտի 18-ին դիմողն իր նախնական կալանավորումը բողոքարկել է Պլովդիվի ռեգիոնալ հանրային դատախազին: Նա *inter alia* նշել է, որ այն գործողությունները, որոնց կապակցությամբ իրեն մեղադրանք է առաջադրվել, քրեական հանցագործություն չեն հանդիսանում (տվյալ ժամանակահատվածում գործող բանկային և արժույթային կարգավորումների համաձայն), և որ ինքը, հետևաբար, անօրինական է մեղադրվել: Նա նաև նշել է, որ առկա չի եղել իր փախուստի կամ այլ հանցագործություններ կատարելու վտանգը: 1996 թվականի մարտի 27-ին բողոքը մերժվել է Ռեգիոնալ հանրային դատախազի կողմից, ով *inter alia* արձանագրել է.

«Քանի որ Յանկովին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 282-րդ հոդվածի 2-րդ մասով, նախնական կալանքը Քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պարտադիր է»: Նախնական կալանք չկիրառելու հնարավորությունը պետք է քննարկվի նախնական քննության մարմինների կողմից, եթե միայն, ելնելով գործի բնույթից և մեղադրյալին վերաբերող մասնավոր հանգամանքներից, ակնհայտ է, որ բացակայում է նրա փախուստի, այլ հանցագործություններ կատարելու կամ արդարադատության իրականացմանը խոչընդոտելու վտանգը:

Գործի նյութերը վկայում են, որ եթե Յանկովն ազատ արձակվի, նա կարող է փախչել, այլ հանցագործություններ կատարել կամ խոչընդոտել արդարադատության իրականացմանը... Նախնական քննության մարմինները որևէ պարտականություն չունեն պարզելու այն հանգամանքները, որոնց հիման վրա վերոնշյալ եզրակացություններն արվել են»:

33. 1996 թվականի ապրիլի 18-ին դիմողը Շրջանային դատարանից պահանջել է կարգադրել իրեն ազատ արձակել այն հիմքով, որ իրեն ներկայացված մեղադրանքը չի բովանդակում ենթադրյալ հանցագործության վերաբերյալ մանրամասներ, և որ վկայակոչված դրույթները կիրառելի չեն եղել, քանի որ ինքը չի հանդիսացել այն բանկի աշխատող կամ պաշտոնատար անձ, որի ֆոնդերը վտանգի են ենթարկվել: Կողմերն այս բողոքի քննության կապակցությամբ այլ տեղեկություն չեն ներկայացրել:

34. 1996 թվականի ապրիլի 29-ին Գլխավոր հանրային դատախազի գրասենյակի դատախազը հաստատել է Ռեգիոնալ հանրային դատախազի 1996 թվականի մարտի 27-ի որոշումը՝ հավելելով, որ փախուստի, հանցագործությունների կատարման կամ արդարադատության իրականացմանը խոչընդոտելու վտանգը բխում է այն փաստից, որ դիմողն ունի ֆինանսական և այլ կապեր երկրից դուրս գտնվող անձանց հետ: Համապատասխան բանկային և արժույթային կարգավորումների վերլուծության վրա հիմնված՝ դիմողի փաստարկներն առ այն, որ նա հանցագործություն չի կատարել,

պետք է գնահատվեն քննիչի կողմից և գործի հանգամանքների ուսումնասիրության արդյունքում:

35. 1996 թվականի սեպտեմբերի 11-ին մյուս բողոքը մերժվել է Գլխավոր հանրային դատախազի գրասենյակի ավելի բարձր դասի դատախազի կողմից այն հիմքով, որ նախնական քննությունը դեռևս չի ավարտվել, առկա է դիմողի կողմից արդարադատության իրականացմանը խոչընդոտելու վտանգ: Բացի դրանից, մեղադրանքների էության վերաբերյալ փաստարկները կարող են քննության առնվել միայն անհրաժեշտ ապացույցները հավաքելուց հետո:

36. 1996 թվականի սեպտեմբերի 12-ին դիմողն իրեն ազատ արձակելու վերաբերյալ այլ խնդրանք է ներկայացրել Շրջանային դատախազի գրասենյակ: Նա *inter alia* նշել է, որ երկար ժամանակ կալանավորված է եղել և որ համապատասխան ապացույցներն արդեն հավաքվել են:

37. 1996 թվականի նոյեմբերի 15-ին դիմողը պահանջել է բժշկական զննություն անցնել, քանի որ երկարատև կալանավորման պատճառով իր առողջական վիճակը վատացել է:

38. 1996 թվականի դեկտեմբերի 12-ին դիմողն իրեն ազատ արձակելու վերաբերյալ այլ դիմումներ է ներկայացրել Շրջանային և Գլխավոր հանրային դատախազներին:

39. 1996 թվականի դեկտեմբերի 13-ին Շրջանային հանրային դատախազը մերժել է դիմումը՝ *inter alia* նշելով, որ դիմողը մեղադրվում է ծանր դիտավորյալ հանցագործության կատարման մեջ և որ նրա նկատմամբ նաև այլ նախնական քննություն է իրականացվում: Դա թիվ 929/96 քննությունն է, որն սկսվել էր 1996 թվականի անորոշ ժամկետում և պաշտոնատար անձանց կողմից իրականացվում է այլ վարույթով:

40. 1996 թվականի դեկտեմբերի 28-ին դիմողը Ռեգիոնալ հանրային դատախազին ուղարկած բողոքով վիճարկել է իր նախնական կալանքի անօրինականությունը:

41. Այս բողոքը մերժվել է 1997 թվականի հունվարի 30-ին այն հիմքով, որ Քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ազատ արձակումը հնարավոր չէ, քանի որ դիմողի նկատմամբ երկրորդ նախնական քննությունն է (թիվ 929/96) իրականացվում: Ուստի մեղադրյալի կալանավորումը պարտադիր է: Բացի դրանից, քննվող թիվ 300/96 գործով քննությունն ընթանում է և շուտով կավարտվի:

42. 1997 թվականի փետրվարի 13-ին դիմողն իր նախնական կալանքը վիճարկել է Շրջանային դատարան այն հիմքով, որ նախնական քննության՝ օրենքով սահմանված առավելագույն ժամկետն ավարտվել է և որ իր մեղադրանքը հիմնված է արդեն հետազոտված փաստաթղթերի վրա, բացակայում է իր կողմից ապացույցների կեղծման վտանգը: Բացի դրանից, թեև ինքը նախքան ձերբակալումը մի քանի անգամ հարցաքննվել է, սակայն նա երբևէ չի փորձել փախչել:

43. Բողոքը ներկայացվել է Շրջանային դատախազի գրասենյակ, որը, համաձայն ձևավորված պրակտիկայի, պետք է այն գործի հետ մեկտեղ ուղարկեր Շրջանային դատարան: 1997 թվականի փետրվարի 25-ին, երբ դիմողի փաստաբանը բողոք է ներկայացրել Շրջանային դատախազի գրասենյակ, նրա բողոքը դեռևս դատարան ուղարկված չի եղել:

44. Անորոշ ժամկետում դիմողը դատախազական մարմիններին բողոքարկել է, որ իր նախնական կալանքը, որը սահմանվել է իր նկատմամբ հարուցված երկրորդ թիվ 929/96 գործով նախնական քննության կապակցությամբ, անօրինական է: 1997 թվականի մարտի 11-ին Ռեգիոնալ հանրային դատախազը քննության է առել վերոնշյալ բողոքը և որոշում է կայացրել դադարեցնել դիմողի նախնական կալանքը՝ կապված թիվ 929/96 գործի քննության հետ, քանի որ դիմողը կալանավորված է եղել թիվ 300/96 գործի քննության կապակցությամբ:

45. Դիմողի նախնական կալանքը՝ կապված թիվ 300/96 գործի քննության հետ, Շրջանային հանրային դատախազի կողմից երկարացվել է 1997 թվականի ապրիլի 23-ին:

46. 1997 թվականի մարտի 24-ին և 26-ին դիմողի փաստաբանը կրկնել է իր վստահորդին բժշկական զննության ենթարկելու վերաբերյալ խնդրանքը: Նա նշել է, որ 1997 թվականի մարտի 21-ի իր այցելության ժամանակ նա դիմողին տեսել է ակնհայտ վատառողջ վիճակում: Ակներև է դառնում, որ բժշկական զննությունն իրականացվել է անորոշ ժամանակ հաջորդ շաբաթների ընթացքում:

47. 1997 թվականի ապրիլի 23-ին Շրջանային դատախազը հրաժարվել է դիմողին ազատ արձակել: Նա հիմք է ընդունել բժշկական եզրակացությունը, որում ակնհայտորեն եզրահանգում է արվել, որ դիմողն արյան բարձր ճնշում և երիկամներում քարուկներ, տառապում է աթերոսկլերոզով, շաքարախտով, ունի թոքերի, շագանակագեղձի և արյան անոթների խնդիրներ ու դեպրեսիա: Դատախազը, ուսումնասիրելով բժշկի կողմից նշանակված բուժումը, նշել է, որ դիմողը կարող է բուժվել նախնական կալանքի վայրում, նրա առողջությանն սպառնացող վտանգը նվազեցվելու է և որ նրա առողջական վիճակի նկատմամբ ուշադրություն է դարձվելու: Նա նաև շեշտել է, որ դիմողը մեղադրվում է ծանր հանցագործության մեջ, ինչը, իր կարծիքով, նրա ազատ արձակումն անհնարին է դարձնում:

2. Շարունակվող կալանքը դիմողի՝ դատարանի առջև կանգնելուց հետո

48. 1997 թվականի հուլիսի 1-ին դիմողի գործը դատարան է ուղարկվել: 1997 թվականի հուլիսի 23-ին նա Շրջանային դատարանում բողոքարկել է իր նախնական կալանքը՝ այն հիմքով, որ իր դեմ ներկայացված մեղադրանքները թույլ են: Նա նաև նշել է, որ իր կալանավորումն անհրաժեշտ չէր, քանի որ բոլոր ապացույցները հավաքվել էին: Նա կրկնել է, որ ունի ընտանիք և մշտական բնակության վայր, որ նա հարգված քաղաքացի է և որ առկա են արժանահավատ ապացույցներ առ այն, որ ինքը չի փախչի, հանցագործություններ չի կատարի և չի խոչընդոտի արդարադատության իրականացմանը: Նա նաև նշել է իր վատ առողջական վիճակի մասին և ներկայացրել է 1997 թվականի հունվարի 10-ի և 19-ի, ինչպես նաև 27-ի բժշկական եզրակացությունները: Դիմողի փաստաբանը նաև վկայակոչել է Կոնվենցիան և խնդրել է դատարանին իր փաստարկներից յուրաքանչյուրի կապակցությամբ պատճառաբանված պատասխան ներկայացնել:

49. Դռնփակ դատական նիստում քննելով դիմողի գործը՝ Շրջանային դատարանը 1997 թվականի հուլիսի 28-ին մերժել է դիմողի՝ իրեն ազատ արձակելու վերաբերյալ խնդրանքը: Դատարանն արձանագրել է.

«Ամբաստանյալ Թոդոր Անտիմով Յանկովը մեղադրվում է Քրեական օրենսգրքի 282-րդ հոդվածի 3-րդ մասով՝ իր մասնագիտական պարտականությունների խախտման հետ կապված՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված հանցագործության վերաբերյալ գործով: Քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախնական կալանքը պետք է սահմանվի այն դեպքում, երբ անձը մեղադրվում է դիտավորությամբ ծանր հանցագործության կատարման մեջ: «Ամբաստանյալ Թոդոր Անտիմով Յանկովի գործով վերջինս կասկածվում է դիտավորությամբ ծանր հանցագործության կատարման մեջ: Բացառման հիմքերը, որոնք նախատեսված են 2-րդ մասով [152-րդ - հոդված] [կալանավորված անձին նախնական կալանքից ազատ արձակելու հիմքերը] [դիմողի] գործով առկա չեն, քանի որ կա նրա՝ կողմից արդարադատության իրականացմանը խոչընդոտելու կամ փախչելու իրական վտանգ: Ի լրումն դրան, Քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրա 2-րդ մասում ամրագրված բացառությունը չի կարող կիրառվել ամբաստանյալի նկատմամբ այն դեպքում, երբ նրա դեմ քրեական գործով այլ քննություն է իրականացվում: Գործում առկա փաստաթղթերից երևում է, որ Պլովդիվի շրջանային հանրային դատախազության գրասենյակը Սոֆիայի ռեգիոնալ հանրային դատախազություն է ուղարկել այլ հանցագործության վերաբերյալ նյութերը: Յետևաբար, դիմողին ազատ արձակելու բավարար իրավական հիմքեր չկան»:

50. 1997 թվականի հուլիսի 29-ին դիմողը բողոք է ներկայացրել Ռեգիոնալ դատարան, որը 1997 թվականի հուլիսի 30-ին, նախքան բողոքն ուղարկելը, դռնփակ դատական նիստում հաստատել էր դիմողի ազատ արձակումը մերժելու վերաբերյալ իր որոշումը: 1997 թվականի օգոստոսի 4-ին գործն ուղարկվել է Ռեգիոնալ դատարան: 1997 թվականի օգոստոսի 11-ին Պլովդիվի ռեգիոնալ դատարանը դռնփակ դատական նիստում նույն հիմքերով մերժել է դիմողի բողոքը: Բժշկական եզրակացության ուսումնասիրությունից հետո դատարանը գտել է, որ կալանավորման պայմանները նրա առողջությանը վնաս չեն պատճառում:

51. 1997 թվականի սեպտեմբերի 17-ին կայացած Պլովդիվի շրջանային դատարանի առաջին նիստի ընթացքում դիմողը բողոքարկել է իր կալանավորումը: Բողոքը մերժվել է այն հիմքով, որ դիմողը մեղադրվում է դիտավորությամբ ծանր հանցագործության կատարման մեջ, որի համար կալանավորումը պարտադիր է, և որ Քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառությունները չեն կարող կիրառվել ամբաստանյալի նկատմամբ, քանի որ նրա դեմ այլ հանցագործության վերաբերյալ գործով նախնական քննություն է իրականացվում:

52. 1997 թվականի նոյեմբերի 25-ին Պլովդիվի շրջանային դատարանի երկրորդ նիստի ընթացքում դիմողը կրկին բողոքարկել է իր կալանավորումն այն հիմքով, որ ինքը չի կարող խոչընդոտել արդարադատության իրականացմանը, քանի որ բոլոր ապացույցները և համապատասխան ցուցմունքներն արդեն հետազոտվել են դատարանի կողմից: Նա նաև նշել է, որ առկա չէ իր փախուստի վտանգը՝ հաշվի առնելով իր սոցիալական դրությունը և ընտանեկան կապերը: Դատարանը նույն օրը մերժել է բողոքը՝ պատճառաբանելով, որ դիմողը մեղադրվում է դիտավորությամբ ծանր հանցագործության կատարման մեջ և որ առկա չեն նոր հանգամանքներ: 1997 թվականի դեկտեմբերի 1-ին դիմողը բողոք է ներկայացրել Ռեգիոնալ դատարան: 1997 թվականի դեկտեմբերի 15-ին այդ բողոքը Ռեգիոնալ դատարանի կողմից դռնփակ դատական նիստում մերժվել է այն հիմքով, որ դիմողը մեղադրվում է դիտավորությամբ ծանր հանցագործության կատարման մեջ և այստեղից բխում է, որ նրա շարունակական կալանավորումն արդարացված է, հատկապես հաշվի առնելով ենթադրյալ հանցագործության ծանրության աստիճանը:

53. Գրավ կիրառելու վերաբերյալ դիմողի թարմացված բողոքը, որում նա *inter alia* հայտարարել է, որ առկա չէ իր փախուստի վտանգը՝ հաշվի առնելով իր տարիքը, Շրջանային դատարանի կողմից մերժվել է վերջինիս՝ 1998 թվականի հունվարի 8-ի նիստում, քանի որ նա մեղադրվում է դիտավորությամբ ծանր հանցագործության կատարման մեջ և նրա դեմ այլ գործ է հարուցվել:

54. 1998 թվականի հունվարի 13-ին դիմողը բողոք է ներկայացրել Ռեգիոնալ դատարան: Մինչ այդ բողոքն ստանալը՝ 1998 թվականի հունվարի 14-ին Շրջանային դատարանը դռնփակ դատական նիստում կրկին քննել և հաստատել է դիմողին ազատ արձակելը մերժելու վերաբերյալ իր որոշումը: 1998 թվականի հունվարի 19-ին Ռեգիոնալ դատարանը դռնփակ դատական նիստում մերժել է բողոքը:

55. 1998 թվականի փետրվարի 9-ին դիմողի փաստաբանը պահանջել է դիմողին բժշկական զննության ենթարկել, քանի որ նրա առողջական վիճակը վատացել է և նա չորս օր անցկացրել է հիվանդանոցում: 1998 թվականի փետրվարի 27-ին դիմողը զննության է ենթարկվել բժշկի կողմից, ով առաջարկել է նրան տեղավորել սրտաբանական հիվանդանոցում և նշել է, որ նա պետք է հատուկ բուժում ստանա:

56. 1998 թվականի մարտի 9-ին դիմողը բժշկական եզրակացության հիման վրա պահանջել է իրեն ազատ արձակել: Նա նշել է, որ չկա որևէ ապացույց այն մասին, որ առկա է իր փախուստի կամ այլ հանցագործություններ կատարելու վտանգ:

57. 1998 թվականի մարտի 10-17-ը դիմողը պահվել է կարգապահական մեկուսարանում (տե՛ս ստորև):

58. 1998 թվականի մարտի 19-ին Շրջանային դատարանը դիմողի ներկայությամբ քննել է 1998 թվականի մարտի 9-ի բողոքը: Դատարանը մերժել է այն՝ գտնելով, որ

դիմողի առողջությանն սպառնացող վտանգը նույնն է՝ անկախ նրա՝ կալանավայրում կամ տանը գտնվելու հանգամանքից: 1998 թվականի մարտի 24-ին դիմողը բողոք է ներկայացրել ռեգիոնալ դատարան: 1998 թվականի մարտի 25-ին, նախքան բողոքն ստանալը, Շրջանային դատարանը դռնփակ դատական նիստում կրկին քննել և հաստատել է դիմողին ազատ արձակելը մերժելու վերաբերյալ իր որոշումը: Բողոքը Ռեգիոնալ դատարանի կողմից մերժվել է 1998 թվականի մարտի 30-ի դռնփակ դատական նիստում: Այն գտել է, որ առկա չէ հանգամանքների կամ փաստերի փոփոխություն, որը կարող էր վկայել այն մասին, որ դիմողը հանցագործություններ չի կատարելու, չի խոչընդոտելու արդարադատության իրականացմանը կամ չի փախչելու, եթե ազատ արձակվի:

59. Այդ ժամանակ՝ 1998 թվականի մարտի 20-ին, դիմողը կրկին զննության է ենթարկվել երեք բժիշկների կողմից, ովքեր գտել են, որ նա տառապում է տրոմբոզով, որը կարող է վտանգել նրա կյանքը, և նշանակել են հանգիստ և մասնագետի կողմից պարբերաբար ստուգումների իրականացում: 1998 թվականի մարտի 25-ին դիմողը տարվել է հիվանդանոց:

60. 1998 թվականի ապրիլի 9-ին դիմողն իր առողջական վիճակի հիմքով ներկայացրել է գրավի կիրառման վերաբերյալ թարմացված դիմում: 1998 թվականի ապրիլի 23-ին այն մերժվել է Շրջանային դատարանի նիստի արդյունքում, որի ժամանակ դատարանը լսել է երեք բժիշկների ցուցմունք և գտել, որ դիմողի առողջական վիճակը պատշաճ հսկողության տակ է, և որ նա բուժում է ստանում:

61. 1998 թվականի ապրիլի 29-ին դիմողը բողոք է ներկայացրել Ռեգիոնալ դատարան: 1998 թվականի ապրիլի 30-ին, նախքան բողոքն ստանալը, Շրջանային դատարանը դռնփակ դատական նիստում հաստատել է դիմողի ազատ արձակումը մերժելու վերաբերյալ իր որոշումը: Բողոքը 1998 թվականի մայիսի 11-ին Ռեգիոնալ դատարանի դռնփակ դատական նիստում մերժվել է: Այն գտել է, որ չկան օբյեկտիվ հանգամանքներ, որոնք կարող են հիմնավորել եզրակացությունն այն մասին, որ դիմողը չի միջամտելու քննությանը: Ապա դատարանը գտել է, որ «կալանավորման տևողությունը չի կարող դիտվել որպես շեղում Քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի հստակ դրույթներից», և որ դիմողի բժշկական խնդիրները կարող են պատշաճ կերպով լուծվել նրան Սոֆիայի քրեակատարողական հիմնարկ տեղափոխելուց հետո, որտեղ բժշկական ծառայությունները ենթադրաբար ավելի լավն են: 1998 թվականի մայիսի 19-ին դիմողը տեղափոխվել է Սոֆիայի քրեակատարողական հիմնարկ:

62. 1998 թվականի հունիսի 30-ին դիմողը տեղափոխվել է հիվանդանոց:

63. 1998 թվականի հուլիսի 6-ին դիմողը կրկին խնդրել է իրեն գրավով ազատ արձակել՝ նշելով իր առողջական վիճակի և կալանավորման տևողության մասին:

64. 1998 թվականի հուլիսի 9-ին Շրջանային դատարանը նիստ է անցկացրել և որոշել դիմողին ազատ արձակել՝ հիմք ընդունելով նրա առողջական վիճակը: Դիմողը մուծել է գրավի գումարը և ազատ է արձակվել 1998 թվականի հուլիսի 10-ին:

C. Դիմողին պատժելը նրան մենախցում պահելու և 1998 թվականի մարտին նրա գլուխը սափրելու միջոցով

65. 1998 թվականի մարտի 10-ին, նախքան պաշտպանին հանդիպելն իրականացված դիմողի խուզարկության ընթացքում քրեակատարողական հիմնարկի վարչակազմն առգրավել է ձեռագիր նյութեր: Դիմողի պնդմամբ՝ դա մի գրքի սևագիր էր, որն ինքն է գրում, և որում նկարագրված են իր կալանավորմանը և իր նկատմամբ իրականացվող քրեական վարույթին վերաբերող դեպքերը: Ինքը մտադրված է մի քանի հատված կարդալ իր պաշտպանի համար: Ըստ նյութն առգրաված քրեակատարողական հիմնարկի աշխատակցի՝ դիմողը ցանկանում էր այն փոխանցել իր պաշտպանին:

66. Կառավարությունը ներկայացրել է առգրավված նյութի մի քանի էջ: Այն ցույց է տալիս, որ ձեռագիրը հղկված չէ և պատրաստ չէ հրատարակման: Համապատասխան հատվածներում ամրագրված է.

«Իմ դեմ ներկայացված մեղադրանքները չեն պարունակում որևէ փաստ կամ ապացույց, որը կվկայեր իմ հանցավոր դիտավորության կամ իմ կողմից կատարված հանցագործության մասին... Ես կարող եմ միայն նշել, որ իշխանությունների կողմից իմ նկատմամբ կատարված գործողությունները անհիմն են և անօրինական...

Դուռը չխկում է ... մենք ոտքի ենք կանգնում, ձեռքերը մեջքին դրած և մեջքով դեպի բանտապահները. նրանք վախենում են, որ մենք կարող ենք հարձակվել իրենց վրա մեր պլաստմասսայե բաժակներով... Ես երբեք չեմ հասկացել, թե ինչու են այս լավ կերակրված անբանները վախենում, միշտ նրանցից երկուսը կամ երեքը ներկա են, երբ ուտելիք է բաժանվում... Ես ուտում եմ միայն հացի երկու կամ երեք չոր կտոր և նույնքան գդալ կեղտաջուր, որ նրանք ապուր են անվանում: Մենք հաճախ ենք լսում, թե ինչպես են նրանք ջրով բացում ապուրը... Ինչ ցավալի է այս պահերը, երբ տեսնում ես սոված բանտային ընկերոջդ աչքերը... երբ տեսնում ես, թե ինչպես են մարդ արարածները գազան դառնում... Իրավամբ, Բուլղարիայի տնտեսական վիճակը ծանր է... սակայն կալանավորված անձանց այսքան քիչ և այսքան վատ ուտելիք տալն անմարդկային էր..., և ավելին էր թվում, երբ մենք զգում էինք բանտապահների սենյակից եկող տապակած կամ խորոված մսի հոտը: Դա սադիզմ է...

Շատ դժվար էր, երբ նրանք արգելում էին հարազատների և ընկերների հետ հանդիպումները: Ամեն տեղ չէր այդպես. Պլովդիվում մագիստրատները որոշում էին կայացրել կոտրել կալանավորված անձանց նկատմամբ անմարդկային վերաբերմունքի անցյալը...

[Սկզբում] ես չգիտեի և երբևէ չէի ենթադրել, թե ինչի են նման ժողովրդավարական Բուլղարիայի քննչական և դատական մարմինները: Երկար ժամանակ ես հույս ունեի, որ թյուրիմացություն է տեղի ունեցել...

Խուզարկությունը [բնակարանում] իրականացվել է ոստիկանի կողմից [Բ.]: Նրա վարքագիծը մատնում էր նրա անփորձությունը. նա գեղջուկ ցուցամուլ էր...

Այն ժամանակ, երբ ես աշխատում էի օրական 15-16 ժամ... կարող էի ես պատկերացնել, որ այն ամենը, ինչ ես արել եմ... կժխտվի... մի քանի զորեղ անսկզբունքային մարդկանց՝ «օրենքի և կարգի ծառայների» կողմից:

Զուգարան գնալու համար 1.5 - 2 րոպե... Եթե որևէ մեկը երկար է մնում, ապա հաջորդում են գոռոցներ, հայիոյանքներ, ուժեղ հարվածներ դռանը, մահակների հարվածներ... Դու չե՞ս կարողանում հավատալ դրան: Ես նույնպես չէի հավատում, որ կյանքի նման պայմաններ կարող են առկա լինել այս երկրում...

Բանտապահները, որոնց մեծ մասը պարզապես գեղջուկներ են և ավելի լավ են վարձատրվում... քան ուսուցիչները, բժիշկները և ճարտարագետները, «աշխատում են» 24 ժամ, ապա՝ հանգստանում 72 ժամ... Նրանք բանտի իշխանությունն են, նրանք ամեն ինչ են, մենք կախված ենք նրանցից: Ճիշտ է, կան ավելի երիտասարդ և խելացի տղաներ, սակայն նրանք փոքրամասնություն են կազմում...

Երբ մենք վիճարկում էինք բոլոր այս ամոթալի հանգամանքները, արդյունք չէր լինում... Երկու անգամ ստուգումներ են եղել..., բոլոր ոստիկանները վազվզում էին այս ու այն կողմ, անհրաժեշտ էր մաքրել, կալանավայրը ավելի լավ տեսքի բերել. նրանք վախենում էին կալանավորված անձանց բողոքներից: Սակայն տեսուչները եկան, ձևական այց կատարեցին և հեռացան»:

67. 1998 թվականի մարտի 10-ին լսելով դիմողին և քրեակատարողական հիմնարկի աշխատակցին՝ Պլովդիվի բանտի կառավարիչը կայացրել է թիվ 99 կարգադրությունը, որը սահմանում էր.

«Պատիժների կատարման մասին օրենքի 76(k) բաժնի հիման վրա՝ կալանավոր Թոդոր Յանկովը պետք է պատժվի յոթ օր մենախցում պահելու ձևով... աշխատակիցների, քննիչների, դատավորների, դատախազների և պետական մարմինների վերաբերյալ վիրավորական և զրպարտող հայտարարություններ անելու համար»:

68. Թիվ 99 կարգադրությունը չի տրամադրվել դիմողին: Այն իրականացվել է անմիջապես՝ 1998 թվականի մարտի 10-ին:

69. Պարզ է դառնում, որ նախքան կարգապահական մեղախուց տարվելը դիմողը զննվել է բժշկի կողմից:

70. Նաև, նախքան խուց տարվելը նրա գլուխը սափրել են:

71. Ըստ դիմողի՝ մեկուսի պահելու վայրը չունեի զուգարան, և ինքն ստիպված էր դույլ օգտագործել, որը պարբերաբար չէր դատարկվում: Հիգիենիկ պայմանները շատ խղճուկ էին և լուսավորությունը բավարար չէր:

72. Անհայտ ժամանակ դիմողի փաստաբանները տեղեկանալով կիրառված պատժամիջոցի մասին՝ զանգահարել են Բանտերի և կալանավայրերի գլխավոր ղեկավարին, ով լիազորված է քննել մենախցում պահելու վերաբերյալ բողոքները:

73. 1998 թվականի մարտի 17-ին դիմողն ազատ է արձակվել մենախցից:

74. 1998 թվականի մարտի 19-ին նա ներկայացել է Շրջանային դատարանի դռնբաց նիստին: Ինն օր առաջ նրա գլուխը սափրված լինելու հանգամանքը տեսանելի էր:

75. 1998 թվականի մարտի 20-ին դիմողի փաստաբանները բանտի կառավարչի դեմ բողոք են ներկայացրել արդարադատության նախարարի տեղեկալին: Նրանք *inter alia* փոխանցել են դիմողի անհանգստությունն առ այն, որ բանտի կառավարիչը բազմիցս ցույց է տվել անձնական թշնամանք իր նկատմամբ և գործել է օրենքով չսահմանված կարգով:

76. 1998 թվականի ապրիլի 29-ին արդարադատության նախարարի տեղակալը պատասխանել է դիմողի փաստաբաններին: Նա *inter alia* նշել է.

«[բանտի կառավարչի] ենթադրյալ անօրինական ակտի դեմ բերված ձեր բողոքի կապակցությամբ քննություն է իրականացվել... 1998 թվականի մարտի 10-ի թիվ N/99 կարգադրությամբ... մեղադրյալ Յանկովը դատապարտվել է յոթ օր մենախցում պահվելու: Այս կարգապահական միջոցը նշանակվել է այն պատճառով, որ առգրավված թղթերը բովանդակել են արտահայտություններ և նկարագրություններ, որոնք վիրավորական են եղել Ներքին գործերի նախարարության, քննչական մարմինների, դատական համակարգի և պետական մարմինների ու պաշտոնատար անձանց համար (Կարգավորումների 46-րդ բաժին): Նա չի պատժվել այն բանի համար, որ գրավոր թուղթ է ունեցել և ցանկացել է այն դուրս բերել բանտից, ինչն, իհարկե, նրա իրավունքն է: Այդ թուղթը վերադարձվել է մեղադրյալ Յանկովին»:

Մեղադրյալը տառապում է քրոնիկ հիվանդությամբ՝ տրոմբոֆլեբիտով: Նա բանտում անընդհատ հսկողության տակ է և բուժում է ստանում: Նա երկու անգամ ուղարկվել է դուրս բուժման և կրկին կուղարկվի, եթե նման անհրաժեշտություն առաջանա»:

II. ՀԱՍԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

A. Քրեական օրենսգիրք

77. 282-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«[Այլ անձի սեփականության կառավարման կամ պաշտոնական գործառույթ իրականացնող] անձը, ով խախտել է կամ չի կատարել իր մասնագիտական պարտականությունները կամ իրավունքները՝ նպատակ ունենալով իր կամ այլոց համար նյութական օգուտ ստանալ կամ այլոց վնաս պատճառել և այդպիսով

վնասել կամ նյութական վնաս պատճառել, պետք է պատժվի մինչև հինգ տարի ժամկետով ազատազրկմամբ...»:

78. 282-րդ հոդվածի երրորդ մասը, նույն դրույթի առաջին կամ երկրորդ մասի հետ փոխկապակցված, սահմանում է երեքից տասը տարի ժամկետով ազատազրկում առանձնապես ծանր դեպքերում, եթե պատճառվող վնասը շատ էական է կամ հանցանք կատարած անձը բարձր պաշտոն է զբաղեցնում:

Բ. Քրեական դատավարության օրենսգիրք

1. Նախնական կալանք կիրառելու իրավասությունը

79. Տվյալ ժամանակահատվածում և նախքան 2000 թվականի հունվարի 1-ի բարեփոխումները ձերբակալված անձը բերվում է քննիչի մոտ, ով որոշում է, թե արդյոք նա պետք է պահվի կալանքի տակ: Քննիչի որոշումը ենթակա է հաստատման դատախազի կողմից: Բուլղարական իրավունքի իմաստով քննիչների և դատախազների դերի հետ կապված հարցն ամփոփվել է *Nikolova v. Bulgaria* ([GC], թիվ 31195/96, ECHR 1999-II) վերաբերյալ Դատարանի վճռի 25-29-րդ կետերում:

2. Նախնական կալանքի պահանջների և հիմնավորումների վերաբերյալ իրավական չափանիշները և պրակտիկան

80. Տվյալ ժամանակահատվածում 152-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանել են.

«(1) Կալանք պետք է կիրառվի [այն դեպքերում, երբ մեղադրանքը վերաբերում է] դիտավորությամբ ծանր հանցագործության կատարմանը:

(2) 1-ին կետի տակ ընկնող դեպքերում [կալանավորումը] չպետք է պարտադիր լինի, եթե առկա չէ մեղադրյալի՝ արդարադատությունից խուսափելու, քննությանը խոչընդոտելու կամ այլ հանցագործություններ կատարելու վտանգը»:

81. Քրեական օրենսգրքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «ծանր» է համարվում այն հանցագործությունը, որի համար նախատեսված է ավելի քան հինգ տարի ժամկետով ազատազրկում:

82. Գերագույն դատարանի՝ տվյալ ժամանակահատվածում գործող պրակտիկայի (այն այժմ մասամբ դուրս է եկել կիրառությունից 2000 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած փոփոխությունների հետևանքով) համաձայն՝ 152-րդ հոդվածի 1-ին մասը պահանջում է, որպեսզի դիտավորությամբ ծանր հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը կալանավորվի: 152-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բացառություն թույլատրվում է միայն այն դեպքում, երբ անտարակույս պարզ է, որ բացառված է փախուստի կամ կրկնակի հանցագործություն կատարելու ցանկացած վտանգ, օրինակ, եթե մեղադրյալը լուրջ հիվանդ է, ծեր է կամ արդեն կալանավորվել է այլ հիմքով, ինչպիսին է, օրինակ, պատժի կրումը (Dec. 1 of 4.5.1992 in case no. 1/92, Bulletin 1992/93, p. 172; Dec. no. 4 of 21.2.1995 in case no. 76/95; Dec. no. 78 of 6.11.1995 in case no. 768/95; Dec. no. 24 in case no. 268/95, Bulletin 1995, p. 149):

83. 152-րդ հոդվածի 3-րդ մասը՝ մինչև 1997 թվականի օգոստոսը գործող խմբագրությամբ, սահմանել է, որ կալանքի տակ պահելն առանց բացառության պարտադիր է այն դեպքերում, երբ հանրային մեղադրանքի այլ գործերով մեղադրյալի նկատմամբ քրեական վարույթ է իրականացվում կամ եթե նա կրկնահանցագործ (ռեցիդիվիստ) է:

84. 1997 թվականի մարտի 21-ին Գերագույն վճռաբեկ դատարանը քննել է Գլխավոր հանրային դատախազի պահանջը՝ կապված Քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածը մեկնաբանող որոշման կայացման հետ: Գերագույն վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսգրքի 152-րդ հոդվածի 3-րդ մասը չի համապատասխանում Սահմանադրությանը, Կոնվենցիային և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին: Յետևաբար, այն որոշել է գործն ուղարկել Սահմանադրական դատարան, որն իրավասու է որոշում կայացնել օրենսդրության՝ Սահմանադրությանն ու միջազգային պայմանագրերին համապատասխան:

նության հարցի կապակցությամբ: Արդյունքում՝ Սահմանադրական դատարանն այդ կապակցությամբ որոշում չի կայացրել, քանի որ վիճարկված դրույթը 1997 թվականի օգոստոսի 11-ից դադարել է գործելուց:

3. Կալանքի դատական վերանայումը

85. Տվյալ ժամանակահատվածում Գերագույն դատարանը գտել է, որ նախնական կալանքի վերաբերյալ բողոքները քննելիս դատարաններն ազատ չեն քննության առնել կալանավորված անձին առաջադրված մեղադրանքը հիմնավորող բավարար ապացույցների առկայության հարցը: Նրանց խնդիրը միայն կալանավորման մասին կարգադրության օրինականության ստուգումն է (Dec. no. 24 of 23.5.1995 in case no. 268/95, Bulletin 1995, p. 149):

86. Քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ և 40-րդ հոդվածներում ամրագրված ընդհանուր կանոնների և գործող պրակտիկայի համաձայն՝ ազատ արձակման վերաբերյալ դիմողի խնդրանքը դատական քննության փուլում քննության է առնվում գործը քննող դատարանի կողմից՝ դրն փակ նիստում կամ բանավոր քննության ժամանակ:

87. Գործը քննող դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան (344-րդ հոդվածի 3-րդ մաս): Բողոքը պետք է ներկայացվի յոթ օրվա ընթացքում (345-րդ հոդված)՝ գործը քննող դատարանի միջոցով (348-րդ հոդվածի 4-րդ մաս՝ 318-րդ հոդվածի 2-րդ մասի հետ փոխկապակցված): 347-րդ հոդվածի համաձայն՝ բողոքն ստանալուց հետո գործը քննող դատարանը դրն փակ դատական նիստում պետք է որոշում կայացնի, թե առկա են, արդյոք, իր որոշումը վերացնելու կամ փոփոխելու հիմքեր: Եթե գործը քննող դատարանը դա անելու պատճառներ չի գտնում, ապա բողոքն ուղարկվում է վերադաս դատարան:

88. 348-րդ հոդվածը սահմանում է, որ բողոքն ստացած դատարանը կարող է բողոքը քննել դրն փակ դատական նիստում կամ, եթե անհրաժեշտ կգտնի՝ բանավոր լսման ժամանակ:

Կ. Դատավճիռների կատարման մասին օրենքը և այն փոխատեղող կարգավորումները, որոնք գործել են տվյալ ժամանակահատվածում

89. Օրենքի 76(k) բաժնի համաձայն բանտարկյալը, ով կարգապահական զանցանք է կատարել, կարող է պատժվել *inter alia* մինչև 14 օր ժամկետով մենախցում պահվելով:

90. Կարգավորումների 46-րդ կանոնը սահմանում է, որ եթե բանտարկյալի գրությունները կամ բողոքները զրպարտող կամ վիրավորական լեզվով են գրված, նա կարող է կարգապահական կամ քրեական պատասխանատվության ենթարկվել:

91. Տվյալ ժամանակահատվածում, համաձայն 43-րդ կանոնի 2-րդ մասի և 98-րդ կանոնի՝ բանտարկյալը, ով պատժվել է մենախցում պահվելու ձևով, կարող է բանտի կառավարչի միջոցով բողոք ներկայացնել Բանտերի և կալանավայրերի գլխավոր ղեկավարին: Բոլոր բողոքները, կառավարչի մեկնաբանությունների հետ մեկտեղ, բանտային իշխանությունների կողմից պետք է ուղարկվեն 24 ժամվա ընթացքում: Գլխավոր ղեկավարը պարտավոր է պատասխան ներկայացնել երեք օրվա ընթացքում: Բողոքի ներկայացումը չի կասեցնում պատժի կատարումը:

92. 2002 թվականին օրենքի նոր՝ 78b բաժինը սահմանել է մենախցում պահելու հետ կապված պատժի դեմ դատական կարգով բողոք ներկայացնելու հնարավորություն:

Ը. Վնասի համար պետության պատասխանատվության մասին 1988 թվականի օրենքը

93. 2(1)-րդ բաժինը սահմանում է.

«Պետությունը պետք է պատասխանատու լինի... քննչական, դատախազական մարմինների, դատարանների կողմից [մասնավոր անձանց] պատճառված վնասի համար...» կապված.

1. անօրինական նախնական կալանքի հետ..., եթե [կալանավորման վերաբերյալ կարգադրությունը] վերացվել է օրինական հիմքերի բացակայության պատճառով...»:

94. 2(1)-րդ բաժնի վերաբերյալ ներկայացված նախադեպային իրավունքը հարուստ չէ: Վերջին երկու վճիռներում Գերագույն վճռաբեկ դատարանը գտել է, որ նախնական կալանքի վերաբերյալ կարգադրությունը պետք է դիտվի որպես «օրինական հիմքերի բացակայության պատճառով վերացված», և արդյունքում առաջանա պետության պատասխանատվության հարցը, եթե քրեական վարույթները դադարեցվել են այն հիմքով, որ մեղադրանքներն ապացուցված չեն (Decision no. 859, 10 September 2001, case no. 2017/00) կամ եթե մեղադրյալն արդարացվել է (Decision no. 978, 10 July 2001, case no. 1036/01): Ներկայացված տեսակետը ենթադրում է, որ եթե նախնական կալանքի վերաբերյալ կարգադրությունը հետադարձության կարգով զրկվում է օրինական հիմքերից, ապա մեղադրանքներն անհիմն են:

95. Մյուս կողմից՝ Կառավարությունը չի տեղեկացրել Դատարանին օրենքի 2(1)-րդ բաժնի հիմքով ներկայացված որևէ հաջողված բողոքի մասին, որը կապված է անավարտ քրեական դատավարության կամ այնպիսի վարույթի հետ, որն ավարտվել է վերջնական դատապարտմամբ: Պարզ է դառնում, որ անավարտ քրեական վարույթով նախնական կալանքը դադարեցնող որոշումներն օրենքի 2(1)-րդ բաժնի իմաստով երբևէ չեն դիտվում որպես «անօրինական հիմքերի բացակայության պատճառով վերացնող» որոշումներ: Բացի դրանից, «անօրինական» և «օրինական հիմքերի բացակայություն» հասկացությունները ակնհայտորեն վերաբերում են անօրինականությանը ներպետական օրենսդրության իմաստով:

96. Օրենքի 2(2)-րդ բաժնի իմաստով որոշակի հանգամանքներում վնասի վերաբերյալ պահանջ կարող է ներկայացվել «քրեական մեղադրանքների անօրինական ներկայացման» պատճառաբանությամբ: Նման բողոք կարող է ներկայացվել միայն եթե մեղադրյալն արդարացվել է դատարանի կողմից կամ քրեական վարույթը դատարանի կամ դատախազական մարմինների կողմից դադարեցվել է այն հիմքով, որ մեղադրյալը հանցագործություն չի կատարել, փաստերը հանցագործություն չեն հանդիսանում կամ որ քրեական վարույթը հարուցվել է համապատասխան վաղեմության ժամկետն անցնելուց հետո կամ չնայած համապատասխան համաներման առկայությանը: Հակառակ 2(1)-րդ բաժնի իմաստով ընտրված լուծմանը (տե՛ս վերևը՝ կետ 94), Գերագույն վճռաբեկ դատարանը գտել է, որ 2(2)-րդ բաժնի իմաստով պատասխանատվություն չի առաջանում, եթե քրեական դատավարությունը դադարեցվել է մինչդատական վարույթում՝ մեղադրանքն ապացուցված չլինելու հիմքով (Decision No. 1085, 26 July 2001, case no. 2263/00, Supreme Court of Cassation-IV):

97. Այն անձինք, ովքեր քննչական և դատախազական մարմինների կամ դատարանների կայացրված որոշումների արդյունքում պատճառված վնասի փոխհատուցում են պահանջում այն հանգամանքներում, որոնք տեղավորվում են վնասի համար պետության պատասխանատվության մասին օրենքի շրջանակներում, չեն կարող ընդհանուր խախտման օրենքով պահանջ ներկայացնել, քանի որ օրենքը հանդիսանում է *lex specialis* և բացառում է ընդհանուր ռեժիմի դիմումները (section 8 « 1 of the Act; Dec. No. 1370, 16.12.1992, civil case no. 1181/92., Supreme Court-IV): Կառավարությունը չի վկայակոչել հաջողության հասած որևէ բողոք, որը ներկայացվել է անօրինական նախնական կալանքի վերաբերյալ օրենսդրության ընդհանուր խախտման հիմքով:

E. Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխման եվրոպական կոմիտեի («CPT») մեկնաբանությունները՝ կապված բանտարկյալների գլուխները հարկադիր կարգով սափրելու հետ

98. Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետություն 1998 թվականին կատարած այցի արդյունքում կազմված զեկույցում, որը հրապարակվել է 2001 թվականի հոկտեմբերի 11-ին, CPT-ն նշել է.

«CPT-ն ցանկանում է ուշադրություն հրավիրել... իր հանձնախմբի կողմից [մի բանտում] նկատված պրակտիկայի վրա...: Առաջինը՝ նոր բերված և փախուստի դիմած ու հետ բերված բանտարկյալների գլուխների սափրումն է: Այդ հիմնարկի ավագ աշխատակազմն ընդունեց, որ նման գործընթացը բժշկական հիմնավորում չունի և կարող է դիտվել որպես նվաստացնող...»

CPT-ն առաջարկում է, որ «Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության իշխանություններն այս պրակտիկան դադարեցնեն»:

ՕՐԵՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

99. Կոնվենցիայի 3-րդ հոդվածով դիմողը վիճարկել է, որ իր գլուխը սափրել են, և որ նա յոթ օր պահվել է մենախցում:

100. Կոնվենցիայի 3-րդ հոդվածը սահմանում է.

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

A. Կողմերի փաստարկները

101. Դիմողը նշել է, որ իր գլուխը սափրելը բարբարոսական գործողություն է եղել՝ զուրկ որևէ իրավական հիմքից: Միջոցն անհրաժեշտ չի եղել հիգիենիկ պատճառներով, քանի որ տվյալ ժամանակահատվածում տվյալ կալանավայրում մակաբույծների հետ կապված խնդրի մասին որևէ նշում չի եղել: Դիմողի՝ 55 տարեկան, բարձրագույն կրթություն և դոկտորի կոչում ունեցող անձի համար նման նվաստացումը հատկապես ցավազին էր: Թեև որևէ անձ ներկա չի եղել նրա գլուխը սափրելիս, սակայն արդյունքը դրանից հետո երկար ժամանակ տեսանելի է եղել: Այնուհետև դիմողը նշել է, որ կարգապահական խցի պայմաններն անմարդկային են եղել, հատկապես այն անձի համար, ով տառապում է լուրջ քրոնիկ հիվանդությամբ:

102. Կառավարությունը նշել է, որ դիմողի գլուխը սափրելը եղել է մակաբույծների դեմ իրականացված հիգիենիկ միջոց և նրան նվաստացնելու նպատակ չի ունեցել: Մասնավորապես, սափրումը չի իրականացվել այլ կալանավորների ներկայությամբ:

B. Դատարանի գնահատականը

1. Ընդհանուր սկզբունքներ

103. Նախ՝ Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածն ամրագրում է ժողովրդավարական հասարակության ամենահիմնարար արժեքները: Այն բացառիկորեն արտահայտություններով արգելում է խոշտանգումները կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ հանգամանքներից և տուժողի վարքագծից (տե՛ս, օրինակ, *Labita v. Italy* [GC], թիվ 26772/95, կետ 119, ECHR 2000-IV):

104. Դատարանի կողմից վերաբերմունքը դիտվում է որպես «անմարդկային», քանի որ այն *inter alia* կանխատեսված է եղել, կիրառվել է ժամեր շարունակ և պատճառել է կամ իրական մարմնական վնասվածք կամ էական ֆիզիկական և հոգեկան տառապանք: Դատարանը վերաբերմունքը համարում է «նվաստացնող», քանի որ այն եղել է այնպիսին, որ նսենացրել է տուժողների մարդկային արժանապատվությունը կամ նրանց մեջ մեծացրել է վախի, տառապանքի և անլիարժեքության զգացումը և կարող է նվաստացնել ու արժեզրկել նրանց (տե՛ս, *mutatis mutandis*, *Tyrer v. the*

United Kingdom 1978 թվականի ապրիլի 25-ի վճիռը, Series A no. 26, էջ 15, կետ 30, Soering v. the United Kingdom 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, Series A no. 161, էջ 39, կետ 100, տե՛ս, *V. v. the United Kingdom* [GC], թիվ 24888/94, կետ 71, ECHR 1999-IX, և *Valasinas v. Lithuania*, կետ 117, թիվ 44558/98, ECHR 2001-VIII):

105. Գնահատելու համար, թե վերաբերմունքը 3-րդ հոդվածի իմաստով «նվաստացնող» է, Դատարանը պետք է ուշադրություն դարձնի այն հանգամանքի վրա, թե դրա օբյեկտը կոնկրետ անձի նվաստացումն ու արժեզրկումն է, և, այնքանով որքանով դա վերաբերում է հետևանքներին, արդյոք այն 3-րդ հոդվածի հետ անհամատեղելի կերպով ազդում է նրա անհատականության վրա: Անգամ նման նպատակի բացակայությունը չի կարող վերջնականապես բացառել 3-րդ հոդվածի խախտումը (տե՛ս, օրինակ, *Peers v. Greece*, թիվ 28524/95, կետ 74, ECHR 2001-III, և *Kalashnikov v. Russia*, թիվ 47095/99, կետ 101, ECHR 2002-VI):

106. Վատ վերաբերմունքը պետք է ունենա խստության նվազագույն մակարդակ՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի սահմաններում տեղավորվելու համար: Այս նվազագույն մակարդակի գնահատումը հարաբերական է. այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են վերաբերմունքի տևողությունը, դրա պատճառած ֆիզիկական և հոգեկան տառապանքը և, որոշ դեպքերում՝ տուժողի սեռը, տարիքը և առողջական վիճակը (տե՛ս, *Ireland v. the United Kingdom*. 1978 թվականի հունվարի 18-ի վճիռը, Series A no. 25, էջ 65, կետ 162):

107. Դատարանը հետևողականորեն շեշտել է, որ պատճառված տառապանքը և նվաստացումը պետք է գերազանցեն օրինական վերաբերմունքի կամ պատժի հետ կապված տառապանքի կամ նվաստացման անխուսափելի տարրերը: Անձին ազատությունից զրկելու հետ կապված միջոցները հաճախ կարող են ներառել նման տարրեր: Պետությունը պետք է վստահ լինի, որ կալանավորված անձը պահվում է այնպիսի պայմաններում, որոնք համապատասխանում են նրա մարդկային արժանապատվությանը, որ միջոցի կիրառման ձևը և մեթոդը նրան այնպիսի տառապանք կամ նեղություն չեն պատճառել, որն իր ինտենսիվությամբ գերազանցել է կալանավորման արդյունքում անխուսափելիորեն առաջացող տառապանքի մակարդակը, և որ հաշվի առնելով ազատագրվման փաստացի պահանջները՝ նրա առողջությունը և բարեկեցությունը պատշաճ կերպով ապահովվել են (*Kudła v. Poland* [GC], թիվ 30210/96, կետեր 93-94, ECHR 2000-XI):

2. Այդ սկզբունքների կիրառումը սույն գործով

108. Դատարանը նշում է, որ դիմողի գլուխը սափրվել է նախքան նրան մենախուց տանելը (տե՛ս, վերը՝ կետ 70):

109. Դատարանը հնարավորություն չի ունեցել քննարկել այն հարցը, թե կալանավորի գլուխը սափրելը կարող է, արդյոք, ի խախտումն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի, նվաստացնող վերաբերմունք հանդիսանալ:

110. Կալանավորված անձանց արժանապատվության վրա ազդող այլ գործողությունների կապակցությամբ Դատարանը նշել է, քանի որ մերկացմամբ զուգորդված զննումները կարող են առանձին դեպքերում անհրաժեշտ լինել բանտի անվտանգությունն ապահովելու կամ անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու համար, ուստի դրանք պետք է իրականացվեն պատշաճ կերպով և դրանց իրականացումը պետք է հիմնավորված լինի: Մերկացմամբ զուգորդված զննության նույնիսկ մեկ դեպք կարող է նվաստացնող վերաբերմունք համարվել՝ ելնելով դրա իրականացման ձևից, նվաստացման և արժեզրկման նպատակի առկայությունից և հիմնավորման բացակայությունից (տե՛ս, վերը՝ *Valasinas*, և *Iwanczuk v. Poland*, թիվ 25196/94, 2001 թվականի նոյեմբերի 15): *Van der Ven v. the Netherlands* (թիվ 50901/99, ECHR 2003-...) գործով մերկացմամբ զուգորդված զննումները, թեև իրականացվել էին «նորմալ» ձևով, սակայն նվաստացնող ազդեցություն էին ունեցել և խախտել Կոնվենցիայի 3-րդ հոդվածը, քանի որ իրականացվել էին պարբերաբար՝

շաբաթը մեկ անգամ՝ որպես պրակտիկայի մաս, ինչը դիմողի կոնկրետ գործով հստակ հիմնավորում չի ունեցել:

111. Մյուս կողմից՝ Դատարանը նաև նշել է, որ ձեռնաշղթաները՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով, որպես կանոն, խնդիր չեն առաջացնում, եթե այդ միջոցը կիրառվում է օրինական ձերբակալման կամ կալանավորման ընթացքում և չի հանգեցնում ուժի կիրառման կամ հանրային ցուցադրության՝ գերազանցելով տվյալ իրավիճակից բխող ողջամիտ անհրաժեշտությունը: Եթե նույնիսկ ձեռնաշղթաներն անհրաժեշտ չեն եղել՝ ելնելով կալանավորված անձի վարքագծից, և հանրային ցուցադրությունը շատ կարճ է տևել, Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով դաժանության նվազագույն շեմը հաղթահարված չի եղել *Raninen v. Finland* (no. 20972/92, *Reports of Judgments and Decisions* 1997-VIII) գործով, քանի որ ոստիկանը գործել է այն վստահությամբ, որ իր վարքագիծը համապատասխանում է համապատասխան կարգավորումներին, նվաստացման որևէ նպատակ չի հետապնդել և դիմողի նկատմամբ թշնամական վերաբերմունք չի ցուցաբերվել:

112. Վիճարկվող վերաբերմունքի՝ կալանավորի գլուխը հարկադրաբար սափրելու բնութագրիչ առանձնահատկությունն այն է, որ այն ներառում է գլուխը սափրելու միջոցով անձի արտաքին տեսքի հարկադիր փոփոխություն: Նման վերաբերմունքի արժանացած մարդը կարող է անլիարժեքության զգացում ունենալ, քանի որ նրա արտաքին տեսքը նրա կամքին հակառակ փոփոխվում է:

113. Բացի դրանից, բանտարկյալը, ում գլուխը սափրվել է, որոշակի ժամանակահատված կրում է այն վերաբերմունքի նշանը, որին ինքը ենթարկվել է: Այդ նշանն անմիջապես տեսանելի է այլոց, այդ թվում՝ բանտի աշխատակազմի, այլ կալանավորների և այցելուների կամ հասարակության համար, եթե անձը դրանից հետո ազատ է արձակվում կամ հասարակական վայր է տարվում: Այդ անձը, շատ հավանական է, որ իր արժանապատվությունը նվաստացված զգա այն պատճառով, որ տեսանելի ֆիզիկական նշան է կրում:

114. Դատարանը, այսպիսով, գտնում է, որ կալանավորված անձանց գլուխները սափրելը սկզբունքորեն հանդիսանում է այնպիսի գործողություն, որը կարող է նվաստացնող ազդեցություն ունենալ նրանց մարդկային արժանապատվության վրա կամ կարող է նրանց մեջ անլիարժեքության զգացում առաջացնել, ինչը կարող է նվաստացնել կամ արժեզրկել նրանց: Անկախ այն բանից, թե դաժանության նվազագույն շեմը հաղթահարվել է, թե՛ ոչ, այն հարցը, թե վիճարկվող վերաբերմունքը, ի խախտումն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի, նվաստացնող վերաբերմունք առաջացրել է, թե՛ ոչ, կախված է գործի կոնկրետ հանգամանքներից, այդ թվում՝ տուժողի անձնական հանգամանքներից, արգելված գործողությունների կատարման ենթատեքստից և դրա նպատակից:

115. Անհիմն լինելու պատճառաբանությամբ Դատարանը մերժել է Կառավարության փաստարկն առ այն, որ դիմողի գլխի սափրումը հիգիենիկ միջոց է եղել: Որևէ նշում չկա այն մասին, որ տվյալ կալանավայրում առկա է մակաբույծներով վարակվելու խնդիր: Նաև պարզ չէ, թե ինչու մեռնախցում պահելու համար անհրաժեշտ հիգիենիկ պահանջները տարբերվում են նույն կալանավայրի այլ խցերում պահելու պահանջներից:

116. Կառավարությունը չի առաջարկել որևէ այլ բացատրություն: Հետևաբար, անգամ ընդունելով, որ առկա է մեռնախցում պահելու ձևով պատժող կալանավորների գլուխը սափրելու պրակտիկա (տե՛ս վերը՝ կետ 98, Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության բանտերից մեկում CPT-ի կողմից նկատված պրակտիկայի մասին), միևնույն է, վիճարկվող գործողությունը չունի իրավական հիմք և արժեքավոր հիմնավորում:

117. Դատարանը, հետևաբար, գտնում է, որ եթե անգամ դիմողի գլուխը սափրելը նվաստացման նպատակ չի հետապնդել, դրա՝ առանց որևէ հիմնավորման իրականացումն ինքնին ինքնիրավ պատժիչ տարր է պարունակում և, հետևաբար, նրան կարող

էր թվալ որպես իր արժանապատվությունը նվաստացնելու և/կամ իրեն ճնշելու նպատակ հետապնդող գործողություն:

118. Բացի դրանից, կոնկրետ հանգամանքներում դիմողը պատճառներ է ունեցել կարծելու, որ առկա է եղել իրեն նվաստացնելու նպատակ՝ հաշվի առնելով այն փաստը, որ բանտի վարչակազմի կողմից նրա գլուխը սափրվել է, ի թիվս այլոց, բանտապահների վերաբերյալ քննադատական և վիրավորական նշումներ անելու կապակցությամբ նրա նկատմամբ նշանակված պատժի ենթատեքստում (տե՛ս վերը՝ կետեր 65-76):

119. Սույն գործով պետք է հաշվի առնվեն նաև այնպիսի լրացուցիչ գործոններ, ինչպիսիք են դիմողի տարիքը՝ տվյալ ժամանակ 55 տարեկան, ինչպես նաև այն փաստը, որ նրա գլուխը սափրելուց ինն օր հետո նա ներկա է գտնվել դռնբաց դատական միստի (տե՛ս, վերը՝ կետեր 9 և 74):

120. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ սույն գործի մասնավոր հանգամանքներում դիմողի գլուխը սափրելը՝ բանտապահների և պետական մարմինների մասին քննադատական և վիրավորական նշումներ անելու համար նրան մեծախցում պահելու ձևով իրականացված պատժի իմաստով հանդիսացել է բավարար դաժանությամբ չհիմնավորված վերաբերմունք, որը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով պետք է բնութագրվի որպես նվաստացնող:

121. Դրանից հետևում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ կապված դիմողի գլուխը հարկադրաբար սափրելու հետ:

122. Քանի որ դիմողի կողմից չեն ներկայացվել բավարար մանրամասներ իրեն մեծախցում պահելու պայմանների վերաբերյալ, ինչպես նաև հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում քննարկել դիմողի կողմից բարձրացված մնացած հարցերը, որոնք վերաբերում են Կոնվենցիայի 3-րդ հոդվածին:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

123. Կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության..., անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

A. Կողմերի փաստարկները

124. Դիմողը նշել է, որ դատական և քրեակատարողական համակարգերը, ինչպես նաև Կառավարությանը ենթադրաբար զրպարտող գիրք գրելու համար իրեն պատժելը և այդ ձեռագրի առգրավումը հանգեցրել են ազատորեն արտահայտվելու իր իրավունքի անհիմն խախտման: Նա վիճարկել է Կառավարության հավաստումներն այն մասին, որ ինքը պատժվել է իր փաստաբանին մի առարկա փոխանցելու փորձի համար: Պատիժը նշանակվել է որպես այն փաստին արձագանք, որ նա իշխանությունների վերաբերյալ քննադատական դատողություններ է գրել: Բացի դրանից, համապատասխան ներպետական օրենսդրության իմաստով նա իրավասու է իր փաս-

տաբանին չգրաքննված գրագրություն փոխանցել: Ամեն դեպքում, ճիշտ չէ, որ իր ձեռագիրը կապ չի ունեցել իր դեմ հարուցված քրեական վարույթի հետ:

125. Կառավարությունը նշել է, որ պատիժը եղել է օրինական և հիմնավորված: Դիմողը ցանկացել է առանց նախնական թույլտվության իր փաստաբաններին փոխանցել իր նկատմամբ հարուցված քրեական գործի հետ չկապված գրավոր նյութեր: Դա *per se* հանդիսացել է համապատասխան բանտային կանոնների խախտում՝ անկախ տեքստի բովանդակությունից: Համենայնդեպս, քանի որ դիմողի ձեռագիրը բովանդակել է վիրավորական և զրպարտող հայտարարություններ, նրա նկատմամբ իրականացված միջոցները Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով եղել են արդարացված և կոչված են եղել պաշտպանելու այլոց հեղինակությունը և պահպանել դատական համակարգի իշխանության իրականացումը: Եական է, որ դիմողն այդ ժամանակ կալանավորված է եղել, նա իրավասու է ազատ արձակվելուց հետո հրապարակել իր տեսակետները:

B. Դատարանի գնահատականը

1. Խախտման առկայությունը

126. Դատարանն արձանագրում է, որ դիմողը «ոստիկանների, քննիչների, դատավորների, դատախազների և պետական մարմինների վերաբերյալ վիրավորական և զրպարտող հայտարարություններ անելու համար» (տե՛ս, վերը՝ կետեր 67 և 76) բանտի վարչակազմի կողմից պատժվել է յոթ օր կարգապահական խցում պահելու ձևով: Հետևաբար, տեղի է ունեցել արտահատվելու ազատության նրա իրավունքի խախտում:

127. Նման խախտումը հանգեցրել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման, քանի որ այն նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում լեգիտիմ նպատակների իրականացման համար:

2. Հիմնավորումը

(a) Լեգիտիմ նպատակը և օրինականությունը

128. Դատարանը գտնում է, որ դիմողի նկատմամբ նշանակված պատիժը պետք է հետապնդեր Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված մեկ կամ ավելի լեգիտիմ նպատակները: Ավելին, անվիճելի է, որ պատիժն իրավական հիմք ունի (տե՛ս վերը՝ կետեր 89 և 90):

(b) «Անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում»

(i) Համապատասխան սկզբունքները

129. Դատարանը կրկնում է 10-րդ հոդվածի վերաբերյալ իր վճիռներում ընդգծված հիմնարար սկզբունքները (ի թիվս այլ հեղինակավոր աղբյուրների, տե՛ս, հետևյալ վճիռները՝ *Handyside v. the United Kingdom*, 1976 թվականի դեկտեմբերի 7, Series A no. 24, *Lingens v. Austria*, 1986 թվականի հուլիսի 8, Series A, no. 103, *Jersild v. Denmark*, 1994 թվականի սեպտեմբերի 23, Series A, no. 298, *Sřrek v. Turkey* (թիվ1) [GC], թիվ 26682/95, ECHR 1999-IV, *Janowski v. Poland* [GC], թիվ 25716/94, ECHR 1999-I, *Nikula v. Finland*, թիվ 31611/96, 2002 թվականի մարտի 22 և *Lenůk v. Slovakia*, թիվ 35640/97, 2003 թվականի մարտի 11):

(i) Ազատորեն արտահայտվելու իրավունքը ժողովրդավարական հասարակության էական հիմքերից մեկն է և հանդիսանում է դրա առաջընթացի ու յուրաքանչյուր անձի ինքնարտահայտման հիմնարար պայմաններից մեկը: 10-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով այն կիրառելի է ոչ միայն «տեղեկության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարեհամբույր ընդունվում են կամ դիտվում են որպես անվնաս կամ անտարբերության են մատնվում, այլև նրանց նկատմամբ, որոնք վիրավորական են, ցնցող կամ անհանգստացնող: Այսպիսին են բազմա-

կարծության, հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չկա «ժողովրդավարական հասարակություն»: Ինչպես ամրագրված է 10-րդ հոդվածում, այս ազատությունը կարող է սահմանափակվել ենթարկվել, ինչը, սակայն, պետք է նեղ մեկնաբանության ենթարկվի և ցանկացած սահմանափակման անհրաժեշտությունը պետք է համոզիչ լինի:

(ii) «Անհրաժեշտ» ածականը՝ 10-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, ներառում է «հասարակական անհրաժեշտության ճնշման» առկայություն: Պայմանավորվող պետություններն ունեն հայեցողության որոշակի սահման գնահատելու համար, թե առկա է, արդյոք, նման անհրաժեշտություն, սակայն այդ հայեցողությունն իրականացվում է եվրոպական վերահսկողության հետ «ձեռք-ձեռքի» ներառելով երկուստեք օրենսդրությունը և դրա կիրառման արդյունքում կայացված որոշումները, եթե անգամ վերջիններս կայացվել են անկախ դատարանի կողմից: Յետևաբար, Դատարանն իրավասու է վերջնական որոշում կայացնել՝ կապված այն հարցի հետ, թե արդյոք «սահմանափակումը» համապատասխանում է 10-րդ հոդվածով պաշտպանվող՝ արտահայտվելու ազատության սահմանափակման լեգիտիմ նպատակներին:

(iii) Իր վերահսկողական լիազորությունների իրականացնելիս ժամանակ Դատարանը պետք է խախտումը դիտի գործի բոլոր հանգամանքների լույսի ներքո՝ ներառյալ վիճարկվող հայտարարությունների բովանդակությունը և այն հանգամանքները, որոնցում դրանք արվել են: Մասնավորապես, այն պետք է որոշի, թե արդյոք խնդիրը եղել է «հետապնդված լեգիտիմ նպատակներին համապատասխան», և թե ազգային իշխանությունների կողմից ներկայացված հիմնավորումները «համապատասխան և բավարար են»: Դա իրականացնելիս Դատարանն ինքը պետք է համոզվի, որ ազգային իշխանությունները կիրառել են այնպիսի չափանիշներ, որոնք համապատասխանում են 10-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին և, բացի դրանից, որ դրանք հիմնված են համապատասխան փաստերի ընդունելի գնահատման վրա:

(iv) Ժողովրդավարական հասարակությունում անձինք իրավասու են մեկնաբանություններ անել արդարադատության իրականացման և դրանում ներգրավված պաշտոնատար անձանց կապակցությամբ և քննադատել նշված գործընթացն ու անձանց: Իրենց լիազորություններն իրականացնող քաղաքացիական ծառայողների ընդունելի քննադատության սահմանները որոշ հանգամանքներում կարող են ավելի լայն լինել, քան առանձին անհատների ընդունելի քննադատության սահմանները: Սակայն չի կարելի ասել, որ քաղաքացիական ծառայողները գիտակցաբար պատրաստ են իրենց բառերի մանրամասն ուսումնասիրության, գործում են քաղաքական գործիչների նման և, հետևաբար, նրանց նկատմամբ վերաբերմունքը պետք է վերջիններիս հավասար լինի, երբ խոսքը վերաբերում է նրանց գործողությունների քննադատությանը: Բացի դրանից, քաղաքացիական ծառայողների նկատմամբ պետք է առկա լինի անհիմն անհանգստությունից զերծ հասարակական վստահություն, եթե նրանք հաջողությամբ կատարում են իրենց աշխատանքը և անհրաժեշտ է նրանց պաշտպանել վիրավորական, հայհոյական կամ զրպարտող քննադատություններից՝ կապված իրենց պարտականությունների իրականացման հետ:

(ii) Այդ սկզբունքների կիրառումը

130. Դիմողը պատժվել է ենթադրաբար վիրավորական և զրպարտող հայտարարություններ անելու համար:

131. Այս հայտարարությունները չեն քննվել նրա նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում: Ո՛չ բանտի պետը, ով պատժի ենթարկելու մասին որոշում է կայացրել, ո՛չ արդարադատության նախարարի տեղակալը, ով քննել է դիմողի բողոքը, անհրաժեշտ չեն համարել պարզաբանել, թե դիմողի կողմից գրված տեքստում առկա որ արտահայտությունը կամ ենթադրությունն է եղել վիրավորական

կամ զրպարտող և ինչու (տե՛ս, վերը՝ կետեր 67 և 76): Որևէ այլ համապատասխան որոշում չի կայացվել, քանի որ տվյալ ժամանակահատվածում բանտում գտնվելու ընթացքում պատժի նշանակումը դատական վերահսկողության առարկա չէր հանդիսանում (տե՛ս, վերը՝ կետեր 91, 92):

132. Դատարանը պետք է, հետևաբար, քննության առնի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հիման վրա ներկայացված բողոքը՝ առանց ազգային իշխանությունների կողմից կայացված, համապատասխան փաստարկներ պարունակող որոշումների աջակցության:

133. Կառավարության կողմից ներկայացված՝ դիմողի ձեռագրի նմուշներից փորձագետները պարզել են, որ դիմողը *inter alia* նշել է, որ բանտարկյալներին շատ վատ և ոչ բավարար չափով սնունդ էր տրվում, որ բանտապահները գոռում էին, հայիոյում և մահակներով ծեծում այն բանտարկյալներին, ովքեր երկու թուփեց ավելի էին մնում զուգարանում և որ իր դեմ հարուցված քրեական վարույթը եղել է անարդար և անօրինական (տե՛ս, վերը՝ կետ 66-րդ):

134. Հաշվի առնելով կալանքի տակ գտնվող անձանց առանձնակի խոցելիությունը՝ Դատարանը գտնում է, որ կալանավորման պայմանների և քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների արարքների վերաբերյալ ենթադրաբար սխալ մեղադրանք ներկայացրած կալանավորներին պատժելու համար անհրաժեշտ է հաստատուն հիմնավորում, որը հնարավոր կլինի դիտել որպես «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ»:

135. Սույն գործով իշխանությունները դիմողին պատժել են՝ առանց իրենց որոշումներում անգամ նշելու, թե ինչու են գտել, որ նրա հայտարարությունները զրպարտող են: Հետևաբար, չի կարելի ընդունել, որ դիմողի նոթատետրում շարադրված փաստերը, որոնք վերաբերել են կալանավորման պայմաններին և բանտում ենթադրաբար առկա պրակտիկային, կարող էին նրան պատժի ենթարկելու անհրաժեշտություն առաջացնել:

136. Դիմողը նաև այնպիսի նշումներ է արել, ինչպիսիք են «լավ կերակրված անբանները» և «պարզապես գեղջուկներ» (բանտապահների մասին), «գեղջուկ ցուցամուլ» (ոստիկանի մասին, ում անունը ևս նշվել է) և «գորեղ անսկզբունքային մարդիկ» (հավանաբար ընդհանուր առմամբ դատախազների և քննիչների մասին) (տե՛ս, վերը՝ կետ 66):

137. Թեև վերոնշյալ հայտարարությունները, անշուշտ, ոչ հարգալից են եղել, սակայն դրանք շատ հեռու են ծանր վիրավորական լինելուց: Դատարանը նաև նշում է, որ դրանք արվել են ձեռագիր՝ նոթատետրում, որի մեջ դիմողը անձնական հուշերին կամ նման գրական ձևին բնորոշ լեզվով և ոճով պատմել է իր ձերբակալման և կալանավորման մասին: Դա հանդիսացել է պատմվածք, որում դիմողը նկարագրել է իր՝ որպես կալանավորի կյանքի պահերը և կարծիք է հայտնել իր նկատմամբ հարուցված քրեական վարույթի մասին՝ քննադատելով պաշտոնատար անձանց ենթադրյալ անօրինական գործողությունները (տարբերելու համար տե՛ս, վերը՝ *Janowski v. Poland*, կետ 32):

138. Դատարանը գտնում է, որ քանի որ վիրավորական նշումներն արվել են արդարադատության իրականացման և դրանում ներգրավված անձանց իրական քննադատության ենթատեքստում և գրական ոճով, պաշտոնատար անձինք պետք է իրենց արձագանքներում զուսպ լինեին:

139. Բացի դրանից, Դատարանը զարմացած է այն հանգամանքի վրա, որ դիմողը պատժվել է անձնական նոթատետրում իր դատողությունները գրի առնելու համար, որը նա, ենթադրվում է, որ նախքան առգրավումը որևէ մեկի ցույց չի տվել: Նա որևէ վիրավորական կամ զրպարտող հայտարարություն չի «բարձրաձայնել» կամ «տարածել»: Առավել ևս, չկա որևէ ենթադրություն այն մասին, որ դիմողն այդ տեքստը տարածել է այլ կալանավորների շրջանում (տե՛ս վերը, կետեր 65, 67 և 76):

140. Այդ առումով կարող են հարցեր առաջանալ՝ կապված դիմողի՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածով նախատեսված մտքի ազատության և Կոնվենցիայի 8-րդ հոդվածով

նախատեսված անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի հետ: Սակայն քանի որ ձեռագիր նոթատետրն առգրավվել է այն ժամանակ, երբ դիմողը պատրաստվում էր այն հանձնել իր փաստաբանին և այդպիսով «բացահայտել» դրա բովանդակությունը և այն հասանելի դարձնել այլ անձանց համար, Դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել այն հարցը, թե արդյոք ավելի հարմար կլիներ գործը քննել այդ դրույթներից ելնելով:

141. Այնուամենայնիվ, այն փաստը, որ դիմողի նշումները երբևէ չեն հրապարակվել, անհրաժեշտ է հաշվի առնել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման համամասնության գնահատման ժամանակ: Այս կապակցությամբ դատարանը նաև նշում է, որ ձեռագիրը հրատարակման համար պատրաստ վիճակում չի եղել և որ առկա չի եղել դրա տարածման անմիջական վտանգ, եթե անգամ այն դուրս բերվեր բանտից (տե՛ս - վերը՝ կետ 66):

142. Թեև բանտի վարչակազմի անդամները, ովքեր տեսել են դիմողի ձեռագիր նոթատետրը, պետք է որ իրենց վերաբերող որոշ նշումներից վիրավորված լինեին, սակայն դժվար է ընդունել, որ դա բավարար հիմնավորում է, դրան ի պատասխան, դիմողին պատժելու համար: Քաղաքացիական ծառայողները պարտավոր են իրենց լիազորություններն իրականացնել հիմք ընդունելով միայն մասնագիտական նկատառումները՝ առանց անտեղի անձնական զգացմունքների ազդեցությանը տրվելու: Քաղաքացիական ծառայողների նկատմամբ անհիմն անհանգստությունից զերծ հասարակական վստահությունն ապահովելու անհրաժեշտությունը կարող է արդարացնել ազատորեն արտահայտվելու իրավունքի խախտումը միայն այն դեպքում, երբ այս առումով առկա է իրական վտանգ: Դիմողի ձեռագիր նմուշները, ակնհայտ է, որ նման վտանգ չեն ներկայացրել:

143. Հաշվի առնելով բոլոր համապատասխան հանգամանքները՝ չի կարելի ընդունել, որ մրցակցող իրավունքների և շահերի միջև առկա է եղել արդարացի հավասարակշռություն. դիմողի՝ ազատորեն արտահայտվելու իրավունքը, մի կողմից, և պահպանելու դատական համակարգի իշխանության իրականացումը և քաղաքացիական ծառայողների հեղինակությունը պաշտպանելու անհրաժեշտությունը՝ մյուս կողմից: Դատական համակարգը քննադատող անձնական ձեռագիր նշումներում զուսպ վիրավորական նշումներ անելու համար դիմողին՝ բանտարկյալին, կարգապահական խցում յոթ օր պահելու միջոցով պատժելով իշխանություններն անցել են հայեցողության իրենց սահմանը:

144. Դատարանը, հետևաբար, գտնում է, որ դիմողի արտահայտվելու ազատության իրավունքի խախտումը՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ չի եղել:

145. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ՝ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՀԵՏ ԶՈՒԳԱԿՑՎԱԾ

146. Դիմողը վիճարկել է, որ իր գլուխը սափրելու և ազատ արտահայտվելու իրավունքի խախտման կապակցությամբ իրեն իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չի տրամադրվել: Նա հիմք է ընդունել Կոնվենցիայի 13-րդ հոդվածը, որը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

A. Կողմերի փաստարկները

147. Դիմողը նշել է, որ իրեն տրամադրված իրավական պաշտպանության միակ միջոցը եղել է թիվ 99 կարգադրության դեմ բանտի ղեկավարությանը կամ արդարադատության նախարարի տեղակալին բողոք ներկայացնելը: Սակայն նման բողոքար-

կումները չեն կասեցրել պատժի իրականացումը: Բացի դրանից, դիմողին չի տրամադրվել թիվ 99 կարգադրության պատճենը և այդ կարգադրության արձակումից հետո նա անմիջապես տեղափոխվել է կարգապահական մենախուց, որտեղ չի թուլաւորվել նամակներ ուղարկել կամ ստանալ: Եթե անգամ իրեն որևէ կերպ հաջողվեր բողոք ուղարկել, միևնույն է, դրա քննության համար անհրաժեշտ ժամանակը գերազանցելու էր իր նկատմամբ նշանակված պատժի յոթնօրյա ժամկետը: Դիմողը նաև նշել է, որ ո՛չ դատախազական մարմինները, ո՛չ դատարաններն իրավասու չեն փոփոխել կամ բեկանել կալանավորի նկատմամբ պատիժ ընտրելու վերաբերյալ կարգադրությունը:

148. Կառավարությունը նշել է, որ թիվ 99 կարգադրությունն արձակվել է այնպիսի ընթացակարգով, որը դիմողին հնարավորություն է տվել մեկնաբանել իր դեմ ներկայացված մեղադրանքը: Բացի դրանից, դիմողին իրավական պաշտպանության արդյունավետ միջոց է տրամադրվել, ըստ որի՝ նա կարող էր բանտի պետի միջոցով Գլխավոր ղեկավարին բողոք ներկայացնել: Նա կարող էր նաև դատախազական մարմիններին բողոք կամ քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնել:

B. Դատարանի գնահատականը

149. Դատարանը գտնում է, որ վիճարկված՝ արդյունավետ ընթացակարգերի բացակայությունը մասամբ վերաբերում է դիմողի պատժին:

150. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ մի քանի գործոնների առկայության դեպքում, որոնց թվին են դասվում հանցագործության բնույթը և պատժի խստությունը, կարգապահական վարույթը կարող է կոնկրետ հանգամանքներում դիտվել որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով «քրեական մեղադրանքի» քննությանն ուղղված վարույթ (տե՛ս, *Ezeh and Connors v. the United Kingdom* [GC], թիվ 39665/98 և 40086/98, ECHR 2003-, և *the Campbell and Fell v. the United Kingdom* 1984 թվականի հունիսի 28-ի վճիռը, Series A no. 80): Նման գործերով 6-րդ հոդվածը *lex specialis* է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի կապակցությամբ, որը նվազ խիստ պահանջներ է սահմանում:

151. Սույն գործով, սակայն, դիմողի բողոքները սևեռված են այն ենթադրության վրա, որ առկա չեն եղել իր գլուխը սափրելը (իրավական հիմք չունեցող և այդպիսով կարգապահական վարույթի հետ ուղղակիորեն չկապված գործողությունը) կանխարգելող ընթացակարգեր և որ ազատորեն արտահայտվելու իրավունքի խախտման կապակցությամբ իրեն արդյունավետ փոխհատուցում չի տրամադրվել:

152. Այս հանգամանքներում Դատարանը գտնում է, որ անհրաժեշտ չէ քննության առնել այն հարցը, թե արդյոք դիմողի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը եղել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով «քրեական մեղադրանքի» քննությանն ուղղված վարույթ, քանի որ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների բացակայության վերաբերյալ բողոքը վերաբերում է դեպքերի ավելի լայն շրջանակի և այդպիսով պետք է քննվի Կոնվենցիայի 3-րդ և 10-րդ հոդվածների հետ փոխկապակցված՝ 13-րդ հոդվածով:

153. Ինչպես Դատարանը բազմիցս նշել է, Կոնվենցիայի 13-րդ հոդվածը երաշխավորում է ներպետական մակարդակում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի հասանելիությունը, որի միջոցով հնարավոր կլինի կյանքի կոչել Կոնվենցիայով նախատեսված իրավունքների և ազատությունների էությունը՝ անկախ դրանց՝ ներպետական իրավական կարգում ապահովման ձևից: 13-րդ հոդվածը, այսպիսով, պահանջում է իրավական պաշտպանության ներպետական միջոց նախատեսող այնպիսի դրույթի առկայություն, որի միջոցով քննության կառավարի Կոնվենցիայի իմաստով «վիճարկելի բողոքը» և պահանջի պատշաճ բավարարում կտրամադրվի, սակայն Պայմանավորվող պետություններն օժտված են որոշակի հայեցողությամբ՝ կապված այս դրույթով սահմանված իրենց կոնվենցիոն պարտականությունների կատարման եղանակի հետ: Կոնվենցիայի 13-րդ հոդվածով սահմանված պարտականությունների

սահմանները ևս կարող են փոփոխվել՝ կախված Կոնվենցիայի հիման վրա դիմողի ներկայացրած բողոքի բնույթից: Այնուամենայնիվ, Կոնվենցիայի 13-րդ հոդվածով պահանջվող ընթացակարգը պետք է պրակտիկայում այնքան «արդյունավետ» լինի, որքան դա նախատեսված է օրենքով (ի թիվս այլ հեղինակավոր աղբյուրների, տե՛ս *T.P. and K.M v. the United Kingdom* [GC], կետ 107, թիվ 28945/95, ECHR 2001-V):

154. Դատարանն առաջին հերթին գտնում է, որ Կառավարությունը չի վիճարկել, որ որևէ իրավական հիմք չունեցող գործողության՝ դիմողի գլուխը սափրելու դեմ, որևէ արդյունավետ իրավական միջոց չի տրամադրվել:

155. Դիմողի ազատորեն արտահայտվելու իրավունքի խախտման կապակցությամբ Դատարանը նշում է, որ նրա ձեռագիր նոթատետրն անհապաղ առգրավվել է, և որ նա կարգապահական մեկուսարանում պահվել է իր նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ կարգադրության արձակումից անմիջապես հետո: Ցույց չի տրվել, որ պատժի ի կատար ածումից առաջ նրան տրամադրվել է բողոքարկման ողջամիտ հնարավորություն: Դիմողի փաստաբանները զանգահարել են Բանտերի և կալանավայրերի գլխավոր ղեկավարին, սակայն արդյունք չի եղել: Ի վերջո, ի պատասխան փաստաբանների գրավոր բողոքի՝ Արդարադատության նախարարի տեղակալն ավելի քան մեկ ամիս անց հայտնել է, որ պատիժը եղել է հիմնավորված: Որևէ պատճառաբանություն չի ներկայացվել այնպիսի հանգամանքների վերաբերյալ, ինչպիսիք են վիրավորական նշումների բնույթը, դրանք անելու ենթատեքստը և պատժի համաչափությունը (տե՛ս, վերը՝ կետեր 68-76):

156. Տվյալ ժամանակահատվածում և մինչև 2002 թվականը կալանավորին կարգապահական մեկուսարանում պահելու դեմ բուլղարական օրենսդրության հիման վրա որևէ բողոք չի ներկայացվել: Կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին կարգադրությունը կարող է միայն այդ կարգադրությունն արձակած բանտի պետի միջոցով վարչական կարգով բողոքարկվել Բանտերի և կալանավայրերի գլխավոր ղեկավարին: Արդարադատության նախարարի՝ բանտերի համար պատասխանատու տեղակալը ևս վերահսկողություն է իրականացնում: Սակայն այս վարչական բողոքների ներկայացումը չի կասեցնում պատժի ի կատար ածումը: Բացի դրանից, չկան բավարար դատավարական երաշխիքներ (տե՛ս, վերը՝ կետեր 91 և 92):

157. Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ վերոնշյալ իրավական ռեժիմը և սույն գործով դրա կիրառումը խախտել են դիմողի՝ իր նկատմամբ դրսևորված նվաստացնող վերաբերմունքի և ազատորեն արտահայտվելու իրավունքի խախտման դեմ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

158. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

158. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա դիմողը փաստարկել է, որ ձերբակալվելուց հետո ինքն անհապաղ չի տարվել դատավորի կամ դատական իշխանություն իրականացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի մոտ, ուստի այդ պատճառով իր կալանավորումը եղել է անհիմն և չպատճառաբանված երկարատև:

159. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«Սույն հոդվածի 1-ին կետի (գ) ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

A. Կողմերի փաստարկները

160. Դիմողը, *inter alia*, նշել է, որ իշխանությունները չեն հիմնավորել, որ առկա է իր փախուստի կամ իր կողմից հանցագործություն կատարելու վտանգ: Քանի որ ինքը երբևէ դատապարտված չի եղել և ունի ընտանիք, կայացած պրոֆեսիոնալ կյանք և մշտական բնակության վայր, ինքը չպետք է պահվեր նախնական կալանքի տակ: Դիմողն ընդունել է, որ նախնական քննությունն իրականացվել է ողջամիտ ժամկետում, սակայն նշել է, որ հետաձգումներ են եղել գործի դատական քննության փուլում:

162. Կառավարությունը չի մեկնաբանել դիմողի փաստարկն այն մասին, որ ձերբակալումից հետո ինքն անհապաղ դատավորի մոտ չի տարվել:

163. Ինչ վերաբերում է նրա կալանավորման տևողության հիմնավորմանը, ապա Կառավարությունը բացատրել է, որ դրա անհրաժեշտությունը պայմանավորված է եղել նրան ներկայացված մեղադրանքների ծանրությամբ: Ազատ արձակումը կարող էր հնարավոր լինել միայն այն դեպքում, եթե դիմողն ազգային իշխանություններին ներկայացներ բավարար ապացույցներ առ այն, որ բացառվում է նրա փախուստի կամ նրա կողմից թեկուզ ոչ անմիջական պատճառական կապ ունեցող հանցանք կատարելու վտանգը: Նա նման ապացույցներ չի ներկայացրել: Նա գրավով ազատ է արձակվել, երբ դա անհրաժեշտ է եղել բժշկման պատճառներով:

164. Կառավարության կարծիքով՝ իշխանությունները գործը քննել են պատշաճ ջանասիրությամբ: Գործը շատ բարդ է եղել. այն վերաբերել է մի քանի անձի, ովքեր մեղադրվել են բարդ ֆինանսական գործարքների հետ կապված հանցագործությունների մեջ: Քննիչի կազմած գործը եղել է ավելի քան հազար էջ, որը բաժանված է եղել 20 հատորի: Գործի դատական քննության փուլում մեղադրանքի կողմը հրավիրել է 59 վկա, իսկ պաշտպանության կողմը ներկայացրել է ավելի շատ վկաների ցուցակ: Այսքան մեծաթիվ վկաների հրավիրման հետ կապված դժվարություններն անխուսափելիորեն հանգեցրել են հետաձգումների: Դիմողը կամ մյուս ամբաստանյալներից ոմանք մեղավոր են եղել մի շարք հետաձգումների հարցում՝ կապված նրանց հիվանդության կամ լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու ցանկության հետ: Բացի դրանից, գրավի կիրառմամբ ազատ արձակելու վերաբերյալ պահանջների քննության նպատակով գործի նյութերն ութ անգամ ուղարկվել են վերադաս դատարաններ: Շրջանային դատարանը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները հետաձգումները կրճատելու համար. այն նիստերը նշանակել է երեք ամսվա ինտերվալներով և խնդրել է ոստիկանության աջակցությունը վկաներին հրավիրելու համար:

B. Դատարանի գնահատականը

1. *Դատավորի կամ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով դատական իշխանություն իրականացնելու՝ օրենքով սահմանված իրավասություն ունեցող պաշտոնատար անձի մոտ տարվելու իրավունքի ենթադրյալ խախտումը:*

165. Նախկին վճիռներում, որոնք վերաբերում են չավարտված վարույթով կալանավորման համակարգին, որը գոյություն է ունեցել Բուլղարիայում մինչև 2000 թվականի հունվարի 1-ը, Դատարանը գտել է, որ ոչ քննիչները, ում մոտ մեղադրյալները տարվում են, ոչ դատախազները, ովքեր կալանավորման վերաբերյալ կարգադրությունները հաստատում են, չեն կարող դիտվել որպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով «դատական իշխանություն իրականացնելու՝ օրենքով սահմանված իրավասություն ունեցող պաշտոնատար անձինք» (տե՛ս, *Assenov and Others v. Bulgaria*, 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, *Reports* 1998-VIII, տե՛ս, վերը՝ *Nikolova*-ի վճիռը, և *Shishkov v. Bulgaria*, թիվ 38822/97, ECHR 2003-... քաղվածքներ):

166. Սույն գործը ևս կապված է մինչև 2000 թվականի հունվարի 1-ը չավարտված վարույթով կալանավորման հետ: Ձերբակալումից հետո դիմողը տարվել է քննիչի մոտ, ով իրավասու չի եղել նրան կալանավորելու վերաբերյալ պարտադիր որոշում կայացնել: Այնուամենայնիվ, ոչ քննիչը, ոչ դատախազը, ով հաստատել է կալանավոր-

րունը, 5-րդ հոդվածի 3-րդ մասի նպատակների իմաստով բավարար չափով անկախ և անկողմնակալ չեն եղել՝ հաշվի առնելով մեղադրանքում նրանց ունեցած պրակտիկ դերակատարությունը և քրեական դատավարությանը որպես կողմ նրանց հնարավոր մասնակցությունը (տե՛ս, վերը՝ կետեր 31 և 79): Դատարանը վկայակոչում է համապատասխան ներպետական օրենսդրության կապակցությամբ իր *Nikolova*-ի վճռում իր կողմից արված վերլուծությունը (տե՛ս, այդ վճռի 28, 29 և 45-53 կետերը):

167. Դրանից բխում է, որ տեղի է ունեցել դիմողի՝ դատավորի կամ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով դատական իշխանություն իրականացնելու իրավասություն ունեցող այլ պաշտոնատար անձի մոտ տարվելու իրավունքի խախտում:

2. 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում դատաքննության կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունքների ենթադրյալ խախտում

168. Դիմողը ձերբակալվել է 1996 թվականի մարտի 12-ին և գրավի կիրառմամբ ազատ է արձակվել 1998 թվականի հուլիսի 10-ին (տե՛ս, վերը՝ կետեր 31 և 64): Քննության առարկա ժամանակահատվածը, հետևաբար, երկու տարի և մոտ չորս ամիս է:

169. Ձերբակալված անձի կողմից հանցանքի կատարման վերաբերյալ ողջամիտ կասկածի կայունությունը հանդիսանում է շարունակական կալանքի օրինականության *sine qua non* պայման, սակայն որոշակի ժամանակահատված անցնելուց այն այլևս բավարար չէ: Նման դեպքերում Դատարանը պետք է որոշի, թե դատական իշխանությունների կողմից ներկայացված այլ հիմքերը շարունակում են հիմնավորել ազատությունից զրկելը: Եթե նման հիմքերը «վերաբերում են գործին» և «բավարար» են, ապա Դատարանը պետք է նաև հանդավի, թե իրավասու ազգային իշխանությունները վարույթն իրականացնելիս արդյոք ցուցաբերել են «առանձնահատուկ ջանասիրություն» (տե՛ս, *Labita v. Italy* [GC], թիվ 26772/95, կետեր 152 և 153, ECHR 2000-IV):

170. 2000 թվականի մայիսի 11-ին սույն գործով կայացված իր մասնավոր որոշման մեջ Դատարանն ակնհայտ անհիմն լինելու պատճառաբանությամբ մերժել է դիմողի պնդումներն այն մասին, որ առկա չի եղել իր կողմից հանցանքի կատարման վերաբերյալ ողջամիտ կասկած: Դիմողը կալանքի տակ պահվել է այն կասկածանքի հիմքով, որ նա փաստաթղթեր է կեղծել և չի կատարել իր պարտականությունները՝ ցանկանալով անօրինական օգուտ ստանալ:

171. Ինչ վերաբերում է շարունակական կալանքի հիմքերին, ապա Դատարանը գտնում է, որ սույն գործը նման է *Ilijkov v. Bulgaria* գործին (թիվ 33977/96, 2001 թվականի հուլիսի 26): *Ilijkov*-ի որոշման մեջ Դատարանը նշել է.

«[Իշխանությունները] կիրառել են այն օրենսդրությունը և պրակտիկան, որի համաձայն՝ առկա է եղել կանխավարկած այն մասին, որ կալանքի տակ պահելն անհրաժեշտ է այն գործերով, որոնցով հնարավոր պատիժը գերազանցում է խստության որոշակի շեմը... [Չնայած] հնարավոր պատժի խստությունը էական տարր է... Դատարանը բազմիցս նշել է, որ մեղադրանքների ծանրությունը չի կարող ինքնին հիմնավորել նախնական կալանքի երկարատևությունը...»

Դա հատկապես ճշմարիտ է սույն գործով, որտեղ կիրառելի ներպետական օրենսդրության և պրակտիկայի իմաստով փաստերի, ինչպես նաև դիմողին սպասվող հնարավոր պատժի՝ օրենքի հիման վրա բնութագրումն իրականացվել է դատախազական մարմինների կողմից՝ առանց դատական վերահսկողության ենթարկելու այն հարցը, թե որոշակի ապացույցներով հիմնավորվում է, արդյոք, հիմնավոր կասկածն առ այն, որ մեղադրյալը կատարել է համապատասխան ժամկետով ազատագրվման հանգեցնող հանցագործություն...

Դիմողի երկարատև կալանքի միակ այլ հիմքը հանդիսացել է ներպետական դատարանների դատողությունն այն մասին, որ առկա չեն ազատ արձակումը երաշխավորող բացառիկ հանգամանքներ: Սակայն այդ դատողությունը հիմնված չի եղել գործին վերաբերող բոլոր փաստերի վերլուծության վրա: Իշխանություն-

ները որպես գործին չվերաբերող են դիտել դիմողի փաստարկներն այն մասին, որ ինքը երբևէ դատապարտված չի եղել, որ ունի ընտանիք և կայուն կենսակերպ և որ որոշակի ժամանակ անցնելուց հետո նվազել է արդարադատության իրականացմանը խոչընդոտելու վերաբերյալ համաձայնության գալու կամ փախուստի ցանկացած վտանգ:

Նրանք այդպես են վարվել, քանի որ Քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի և Գերագույն դատարանի պրակտիկայի համաձայն՝ այդ դրույթով սահմանված կանխավարկածը կարելի է ժխտել միայն շատ բացառիկ հանգամանքներում, երբ անգամ փախուստի, կրկին անգամ հանցագործություն կատարելու կամ արդարադատության իրականացմանը խոչընդոտելու վերաբերյալ համաձայնության գալու անգամ ենթադրյալ հնարավորությունը բացառված է լուրջ հիվանդության կամ այլ բացառիկ հանգամանքների առկայության պատճառով: Բացի դրանից, այն նման բացառիկ հանգամանքների առկայությունն ապացուցելու պարտականությունը դնում է կալանավորված անձի վրա, և եթե վերջինս դա չանի, ապա նա պարտավորված է մնալ կալանքի տակ ամբողջ վարույթի ընթացքում...

Ղատարանը կրկնում է, որ կոնկրետ գործով շարունակական կալանքը կարող է հիմնավորված լինել, եթե առկա է հասարակական շահի իրական պահանջի վերաբերյալ հատուկ նշումներ, որը, չնայած անմեղության կանխավարկածի առկայությանը, գերակշռում է անձնական ազատությունը հարգելու պահանջը: Պարտադիր կալանքն ամրագրող ցանկացած համակարգ ինքնին չի համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասին (տե՛ս, *Letellier v. France* 1991 թվականի հունիսի 26-ի վճիռը, *Series A* թիվ 207, կետեր 35-53, *Clooth v. Belgium* 1991 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռը, *Series A* թիվ 225, կետ 44, *Muller v. France* 1997 թվականի մարտի 17-ի վճիռը, *Reports* 1997-II, կետեր 35-45, տե՛ս, վերը՝ *Labita*-ի վճիռը, կետեր 152 և 162-165, և *Ječius v. Lithuania*, [թիվ 34578/97, ECHR 2000-IX] կետեր 93- և 94):

Նման դեպքերում կալանավորված անձի վրա ապացուցման ծանրությունը դնելը հավասարազոր է Կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված կանոնի վերացմանը, մինչդեռ այս դրույթի ուժով կալանավորումը հանդիսանում է ազատության իրավունքից բացառիկ շեղում և սպառնիչ թվարկված ու հստակ սահմանված գործերով այն միակ թույլատրելի կանոնն է»:

172. Հաշվի առնելով պրն Յանկովի երկարատև նախնական կալանքը հիմնավորելու նպատակով ներպետական դատարանների կողմից ներկայացված պատճառաբանությունները՝ (տե՛ս, վերը, կետեր 32, 34, 39, 41, 47, 49-53, 58 և 61), այնպես, ինչպես *Ilijkov*-ի գործով, Ղատարանը գտնում է, որ համապատասխան կոնկրետ փաստեր չներկայացնելով և հիմք ընդունելով միայն մեղադրանքների ծանրության աստիճանի վերաբերյալ սահմանված կանխավարկածը, որը մեղադրյալի վրա է դնում փախուստի, կրկին հանցագործություն կատարելու կամ արդարադատության իրականացմանը խոչընդոտելու վերաբերյալ համաձայնության գալու ենթադրյալ վտանգի բացակայության ապացուցման ծանրությունը, իշխանությունները դիմողի կալանքը երկարացրել են այնպիսի հիմքերով, որոնք չեն կարող բավարար համարվել (տե՛ս - նաև համապատասխան ներպետական օրենսդրության ամփոփումները սույն որոշման 80-82-րդ կետերում և Կառավարության փաստարկները 163-րդ կետում):

173. Ավելին, սույն գործով դատարանները կիրառել են Քրեական դատավարության օրենսգրքի մեկ այլ դրույթ՝ 152-րդ բաժնի 3-րդ կետը, որը բացառում է այն անձին ազատ արձակելու հնարավորությունը, ում դեմ մեկից ավելի գործով քննություն է իրականացվում: Այս կապակցությամբ ուշադրության է արժանի այն, որ քրեական գործով նախնական քննությունների միացման կամ անջատման վերաբերյալ որոշում կայացվում է դատախազական մարմինների կողմից և այն ենթակա չէ դատական վերահսկողության (տե՛ս, վերը, կետեր 39, 41, 49, 83 և 84): Այդ մոտեցումը չի համապա-

տասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասին (տե՛ս, *Nankov v. Bulgaria*, թիվ 28882/95, կետեր 83 և 84, Հանձնաժողովի 1998 թվականի մայիսի 25-ի զեկույց):

174. Դատարանը, այսպիսով, գտնում է, որ իշխանությունները չեն հիմնավորել դիմողին երկու տարի և մոտ չորս ամիս կալանքի տակ պահելը: Այս հանգամանքներում անհրաժեշտ չէ քննության առնել այն հարցը, թե արդյոք վարույթներն իրականացվել են պատշաճ ջանասիրությամբ:

175. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում այն առումով, որ դիմողի նախնական կալանքը հիմնավորված չի եղել և չափազանց երկար է տևել:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

176. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա դիմողը վիճարկել է, որ իր կալանավորման նկատմամբ դատական վերահսկողությունը մակերևութային ձևականություն է եղել, քանի որ նախնական կալանքի դեմ դատական կարգով ներկայացրած իր բողոքներն արագ չեն քննվել և որ դրանցից մի քանիսը դատարանի կողմից քննվել են դռնփակ դատական նիստում: Այս բողոքը վերաբերում է 1997 թվականի հուլիսի 23-ից հետո տեղի ունեցած վարույթներին:

177. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է.

«Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:

178. Դիմողը նշել է, որ ներպետական օրենսդրության և պրակտիկայի իմաստով տվյալ ժամանակահատվածում կալանքի դատական վերահսկողության շրջանակները շատ սահմանափակ են եղել և դրա արդյունքում իր գործով որևէ որոշում չի բովանդակել կալանավորման օրինականությունը հիմնավորող բոլոր գործոնների պատշաճ վերլուծություն:

179. Նա նաև գտել է, որ իր բողոքներն արագ չեն քննվել և որ մրցակցային դատավարության վերաբերյալ պահանջները չեն ապահովվել, քանի որ Շրջանային դատարանը՝ 1997 թվականի հուլիսի 28-ին և Ռեզիդենտ դատարանը բոլոր դեպքերում, իր բողոքները քննել են դռնփակ դատական նիստում:

180. Կառավարությունը նշել է, որ այս փաստարկներն ակնհայտ անհիմն են, քանի որ դատարանները հաշվի են առել բոլոր համապատասխան հանգամանքները և գործել են օրենքով սահմանված կարգով և պատշաճ ջանասիրությամբ:

181. Դատարանը գտնում է, որ ներպետական դատարանները, ինչպես վերոնշյալ՝ *Nikolova*-ի և *Ilijkov*-ի գործերով, կալանավորման դեմ դիմողի բողոքի քննության ժամանակ, հետևել են Պերագույն դատարանի կողմից այդ ժամանակ սահմանված նախադեպային իրավունքին և, հետևաբար, իրենց առջև բարձրացված հարցերի քննարկումը սահմանափակել են այն հարցի հաստատմամբ, թե քննիչը և դատախազը դիմողին մեղադրել են Քրեական օրենսգրքով նախատեսված «դիտավորությամբ ծանր հանցագործության կատարման մեջ»: Քննարկված այլ հարցերը եղել են այն, թե արդյոք դիմողի դեմ իրականացվում է այլ նախնական քննություն և արդյոք նրա առողջական վիճակը պահանջում է նրան ազատ արձակել (տե՛ս, վերը՝ կետեր 49-53, 58 և 61):

182. Իր բողոքներում, սակայն, դիմողը բարձրացրել է իր կալանավորումը հարցականի տակ դնող փաստարկներ: Նա վկայակոչել է կոնկրետ փաստեր, օրինակ՝ այն, որ քննության առաջին մի քանի ամիսների ընթացքում բոլոր ապացույցներն արդեն հավաքվել էին, ինչը նվազեցրել է իր կողմից արդարադատության իրականացմանը խոչընդոտելու ցանկացած վտանգ, որ ինքը հանցավոր անցյալ չունի և որ առկա չէ

իր փախուստի վտանգը՝ հաշվի առնելով իր տարիքը, ընտանեկան կապերը, առողջական վիճակը և կենսակերպը: Դիմողը նաև հավաստել է, որ իր դեմ ներկայացված ապացույցները թույլ են եղել, և որ մեղադրանքները հիմնված են եղել համապատասխան օրենսդրության սխալ մեկնաբանության վրա (տե՛ս, վերը՝ կետեր 48, 52 և 56):

183. Իրենց որոշումներում ներպետական դատարանները չեն քննարկել այս փաստարկներից որևէ մեկը՝ ակնհայտորեն դրանք դիտելով որպես դիմողի նախնական կալանավորման հարցի օրինականության հետ կապ չունեցող (տե՛ս, վերը՝ կետեր 49-53, 58 և 61):

184. Դատարանը կրկնում է, որ ձերբակալված կամ կալանավորված անձինք իրավասու են բողոքարկել իրենց ազատությունից զրկելու՝ Կոնվենցիայի իմաստով «օրինականության» համար էական դատավարական և նյութական պայմանները: Սա նշանակում է, որ իրավասու դատարանը պետք է քննի ոչ միայն ներպետական օրենսդրության մեջ սահմանված դատավարական պահանջների համապատասխանությունը, այլ նաև ձերբակալման համար հիմք հանդիսացած կասկածների ողջամտությունը և ձերբակալման ու հետագա կալանավորման նպատակների օրինականությունը (տե՛ս, *the Brogan and Others v. the United Kingdom*, 1988 թվականի նոյեմբերի 29-ի վճիռը, Series A no. 145-B, էջեր 34-35, կետ 65 և *Grauslys v. Lithuania*, թիվ 36743/97, կետեր 51-55, 2000 թվականի հոկտեմբերի 10):

185. Քանի որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը չի սահմանում կալանավորված անձի փաստարկներում առկա բոլոր հարցերին անդրադառնալու պարտականություն, կալանավորման դեմ բերված բողոքը քննող դատավորը պետք է հաշվի առնի կալանավորված անձի կողմից վկայակոչված կոնկրետ փաստերը, որոնք կարող են կասկածի տակ դնել ազատության սահմանափակման «օրինականության» համար Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի իմաստով էական պայմանները (տե՛ս, վերը՝ *Nikolova*-ի վճիռը, կետ 61):

186. Դիմողի փաստարկները բովանդակել են այսպիսի կոնկրետ փաստեր և անհնարին կամ անլրջի տպավորություն չեն թողել: Դրանք հաշվի չառնելով՝ ներպետական դատարանները չեն ապահովել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված շրջանակի և բնույթի դատական վերահսկողություն:

187. Յետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում:

188. Դիմողը նաև վիճարկել է, որ դատավարություններն արագ չեն ընթացել և որ խախտվել է միջոցների հավասարության սկզբունքը: Գտնելով, որ ներպետական դատարանների կողմից դիմողին տրամադրված դատական վերահսկողության շրջանակները և բնույթը չեն համապատասխանել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում քննության առնել այն հարցը, թե արդյոք նույն դրույթի այլ պահանջներ ևս խախտվել են:

VI. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

189. Դիմողը վիճարկել է, որ նա Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ մասի ենթադրյալ խախտումների համար չի ստացել հայցի ուժով օժտված փոխհատուցում: Այդ դրույթի 5-րդ մասն ամրագրում է.

«Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման գոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

190. Դիմողը նշել է, որ Բուլղարիայի օրենսդրության համաձայն՝ հնարավոր չէ ի խախտումն Կոնվենցիայի իրականացված կալանավորման համար փոխհատուցում ստանալ, սակայն, այնուամենայնիվ, փոխհատուցման տրամադրումը Քրեական դատավարության օրենսգրքի ձևական պահանջների հիման վրա կարգադրվել է: Նա շեշտել է, որ առկա չէ նման հանգամանքներում կալանավորի կողմից փոխհատուցում ստանալու որևէ դեպք:

191. Կառավարությունը մեկնաբանություններ չի արել:

192. Դիմողի նախնական կալանքի ընթացքում խախտվել են դատավորի կամ դատական իշխանություն իրականացնելու իրավասություն ունեցող այլ պաշտոնատար անձի մոտ անհապաղ տարվելու (տե՛ս, վերը՝ կետ 167), ողջամիտ ժամկետում դատաքննության կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու (տե՛ս, վերը՝ կետ 175) իր իրավունքները, ինչպես նաև այնպիսի վարույթ հարուցելու իրավունքը, որի միջոցով կալանավորման օրինականության բոլոր տարրերի կապակցությամբ դատարանի կողմից կարող էր որոշում կայացվել (տե՛ս, վերը՝ կետ 187):

193. Դրանից բխում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ մասը կիրառելի է: Դատարանը, հետևաբար, պետք է սահմանի, թե Բուլղարիայի օրենսդրությունը դիմողի գործով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ մասի խախտման համար նրան տրամադրել է հայցի ուժով օժտված փոխհատուցում, թե՛ ոչ:

194. Վնասի համար պետության պատասխանատվության մասին օրենքի 2(1)-րդ - բաժնի համաձայն՝ այն անձը, ով կալանքի տակ է պահվել կարող է փոխհատուցում պահանջել, եթե միայն կալանավորման վերաբերյալ կարգադրությունը վերացվել է «օրինական հիմքերի բացակայության պատճառով»: Այս արտահայտությունը, անկասկած, վերաբերում է օրինականությանը՝ ներպետական օրենսդրության իմաստով: Այնքանով, որքանով դա կարող է բխեցվել այս դրույթի կիրառման ոչ հարուստ պրակտիկայից, 2(1)-րդ բաժինը կիրառվում է միայն այն դեպքերում, երբ քրեական վարույթը դադարեցվում է մեղադրանքի ապացուցված չլինելու կամ մեղադրյալի արդարացման հիմքով (տե՛ս, վերը՝ կետեր 93-95):

195. Սույն գործով դիմողի նախնական կալանքը դատարանների կողմից դիտվել է որպես ներպետական օրենսդրության պահանջներին ամբողջությամբ համապատասխանող և նրա դեմ հարուցված քրեական վարույթները դեռևս շարունակվում են: Չետևաբար, դիմողը Վնասի համար պետության պատասխանատվության մասին օրենքի 2(1)-րդ բաժնի հիման վրա փոխհատուցման իրավունք չունի: Նույնը վերաբերում է օրենքի 2(2)-րդ բաժնին (տե՛ս, վերը՝ կետեր 31-64 և 96):

196. Դրանից հետևում է, որ դիմողի գործով Վնասի համար պետության պատասխանատվության մասին օրենքը չի նախատեսում հայցի ուժով օժտված փոխհատուցման իրավունք:

197. Բացի դրանից, պարզ չէ, որ նման իրավունք նախատեսված է Բուլղարիայի օրենսդրության որևէ այլ դրույթով (տե՛ս, վերը՝ կետ 97):

198 Այսպիսով, Դատարանը գտնում է, որ Բուլղարիայի օրենսդրությունը դիմողին չի տալիս հայցի ուժով օժտված փոխհատուցման իրավունք, ինչպես դա նախատեսված է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ մասով: Չետևաբար, տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

VII. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

199. Դիմողը վիճարկել է, որ իր նկատմամբ հարուցված քրեական վարույթը չափազանց երկարատև է եղել: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, որոշակիորեն կարևորելով, սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի ... ողջամիտ ժամկետում ... դատաքննության իրավունք»:

200. Դիմողը վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով իր ներկայացրած փաստարկները և հավելել, որ Շրջանային դատարանի կողմից 1999 թվականի փետրվարին ներկայացված պատճառաբանությունների և վերադաս մարմնի առջև առաջին նիստի միջև ժամանակային տևողությունն ինն ամիս է եղել: Բացի դրանից, գործը վերադարձված է եղել նախնական քննության փուլ և ոչինչ չի արվել մինչև 2000 թվականի հունիս ամիսը:

201. Կառավարությունը վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով ներկայացրած իրենց փաստարկները և շեշտել գործի բարդությունը, ինչի պատճառով ավելի շատ ժամանակ է պահանջվել:

202. Վարույթներն սկսվել են 1996 թվականի մարտին: 2002 թվականի նոյեմբերին՝ կողմերի ներկայացրած վերջին տեղեկության ժամկետին, նրանք ավարտել են նախնական քննությունը, որն սկսվել էր դիմողի մեղավորությունը հաստատող և նրան դատապարտող դատավճիռը Ռեգիոնալ դատարանի կողմից 2000 թվականի հունիսի 5-ի դատավճռով բեկանելու և գործը նոր նախաքննության ուղարկելու արդյունքում (տե՛ս, վերը՝ կետեր 11 և 30):

203. Հետևաբար, վարույթները տևել են վեց տարի ութ ամիս և, վերջին տեղեկությունների համաձայն՝ դեռևս շարունակվում են:

204. Դատարանն արձանագրում է, որ դիմողի դեմ հարուցված քրեական վարույթները փաստորեն և իրավաբանորեն բարդ են: Դրանցում ներգրավված են եղել ֆինանսական գործարքների հետ կապված հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող մի քանի անձ (տե՛ս, վերը՝ կետեր 11-13 և 24):

205. Մինչև 1998 թվականի հոկտեմբերը՝ Շրջանային դատարանի կողմից դիմողի դատապարտումը, առկա չեն եղել էական ձգձգումներ, որոնց մեջ մեղավոր էին իշխանությունները: Սակայն Ռեգիոնալ դատարանը դիմողի 1999 թվականի նոյեմբերի բողոքի հիման միստ է անցկացրել բողոքն ստանալուց ավելի քան մեկ տարի հետո: Բացի դրանից, գործով ոչինչ չի արվել մինչև 2000 թվականի հունիսի 5-ը: Դրա նախաքննությունը դեռևս շարունակվում է (տե՛ս, վերը՝ կետեր 27-30):

206. Հաշվի առնելով վարույթների ողջամտության գնահատման վերաբերյալ իր նախադեպային իրավունքում սահմանված չափանիշները (ի թիվս այլոց, տե՛ս, *Pnlissier and Sassi v. France* [GC], թիվ 25444/94, 1999 թվականի մարտի 25 և *Pedersen and Baadsgaard v. Denmark*, թիվ 49017/99, 2003 թվականի հունիսի 19), Դատարանը գտնում է, որ դիմողի նկատմամբ իրականացված քրեական վարույթների տևողությունը չի բավարարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ ողջամիտ ժամկետի պահանջը:

207. Դրանից բխում է, որ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:

VIII. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

208. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը նախատեսում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

A. Վնասը

209. Դիմողը պահանջել է 22.400 բուլղարական լև՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում (հավասարաբժեք է մոտավորապես 11.200 EUR-ի): Նա մանրամասն փաստարկներ է ներկայացրել՝ կապված իր գործով Կոնվենցիայի յուրաքանչյուր խախտման հետ՝ շեշտելով գործի ծանրությունը և վկայակոչելով Դատարանի մի քանի վճիռ:

210. Կառավարությունը փաստարկել է, որ պահանջը չափազանց մեծ է ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական չափանիշներով՝ հաշվի առնելով մասնավորապես, Բուլղարիայի կենսապայմանները:

211. Հաշվի առնելով գործի բոլոր հանգամանքները և հավասար հիմքերով որոշում կայացնելով՝ Դատարանը որոշեց դիմողին տրամադրել 8.000 EUR՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

B. Ծախսերը և ծախքերը

212. Դիմողը պահանջել է 6.685 ԱՄՆ դոլար իր կալանավորման օրինականության կապակցությամբ ներպետական վարույթներում և Ստրասբուրգում վարույթի ընթացքում կատարված 135 ժամ իրավաբանական աշխատանքի համար՝ յուրաքանչյուր ժամը 50 ԱՄՆ դոլարի հաշվարկով: Ի լրումն, նա պահանջել է 576 ԱՄՆ դոլար՝ որպես թարգմանության (96 էջ), պատճենահանման, նամակագրության և անուղղակի ծախսերի փոխհատուցում: Դիմողը ներկայացրել է իր և իր փաստաբանի միջև կնքված՝ վարձատրության վերաբերյալ համաձայնությունը, ժամանակացույցը և փոստային անդորրագրերը:

213. Կառավարությունը նշել է, որ. (i) դիմողի նախնական կալանքի կապակցությամբ Բուլղարիայի դատարաններում իրականացված վարույթների համար պահանջված ծախսերը պետք է հանվեն, քանի որ նշված վարույթները գտնվում են սույն գործի շրջանակներից դուրս, (ii) ամեն դեպքում, դիմողը չի ներկայացրել փաստաբանների լիազորագրերը, որոնք կիրառվում են ներպետական ընթացակարգերում, (iii) թարգմանության և այլ ծախսերի վերաբերյալ պահանջները չեն հաստատվել փաստաթղթերով, (iv) պահանջի մեջ հաշվարկված ժամերի թիվը չափազանցված է, քանի որ այդ աշխատանքը փաստաբանը կարող էր անել առավելագույնը 45 ժամվա ընթացքում, (v) յուրաքանչյուր ժամվա համար 50 ԱՄՆ դոլարը չափազանց շատ է՝ հաշվի առնելով Բուլղարիայում կենսապայմանները, և (vi) առկա է վտանգ, որ Դատարան բողոք բերելը կարող է դառնալ «շահավետ բիզնես»:

214. Դատարանը գտնում է, որ իր՝ անհիմն երկարաձգված նախնական կալանքի դադարեցման համար դիմողի կողմից գործադրված ջանքերի համար ծախսված միջոցների ներառումն անհրաժեշտ էր և վերաբերելի Կոնվենցիայի հիման վրա ներկայացված բողոքին: Բացի դրանից, Դատարանը նշում է, որ դիմողը ներկայացրել է իր և իր փաստաբանի միջև կնքված՝ վարձատրության վերաբերյալ համաձայնությունը, ինչպես նաև իր գործով կատարված աշխատանքների ժամանակացույցը:

215. Քանի որ վիճարկված ժամերի քանակը իսկապես չափազանց է, ուստի այդ հիմքով գումարի չափի նվազեցումն անհրաժեշտ է: Բացի դրանից, թարգմանության վրա կատարված ծախսերի վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ չի ներկայացվել:

216. Հաշվի առնելով բոլոր համապատասխան հանգամանքները և հանելով Եվրոպայի խորհրդի կողմից տրամադրված իրավական օգնության արդյունքում ստացած 630 EUR-ն՝ Դատարանը որոշեց տրամադրել 4.000 EUR՝ որպես ծախսերի և ծախքերի փոխհատուցում:

C. Տուգանային տոկոսները

217. Դատարանը նպատակահարմար է գտնում, որպեսզի տուգանային տոկոսը գանձվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույքի հիման վրա՝ հավելված երեք տոկոս:

ՎԵՐՈԳՐՅԱԼԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում,
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում,
3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում՝ դրա 3-րդ և 10-րդ հոդվածների հետ փոխկապակցված, և
4. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում այն առումով, որ դիմողը ձերբակալվելուց հետո չի տարվել դատավորի կամ դատական իշխանություն իրականացնելու իրավասություն ունեցող այլ պաշտոնատար անձի մոտ և որ նրա նախնական կալանքն ամբողջ ընթացքում անհիմն և չափազանց երկար է տևել,
5. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում,
6. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ մասի խախտում,

7. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում,

8. Վճռում է

(a) որ վճիռը վերջնական դառնալուց հետո երեք անվա ընթացքում պատասխանող պետությունը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, պետք է դիմողին վճարի 8.000 EUR (ութ հազար եվրո)՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում և 4.000 EUR (չորս հազար եվրո)՝ որպես ծախսերի և ծախքերի փոխհատուցում, որը պետք է տրամադրվի պատասխանող պետության արժույթով, վճարման օրը գործող փոխարժեքով, գումարած ցանկացած հարկ, որը կարող է գանձվել ոչ նյութական վնասի կապակցությամբ,

(b) որ վճարումը վերոհիշյալ եռամսյա ժամկետը լրանալուց հետո կատարելու դեպքում այդ ժամանակահատվածի համար պետք է վճարվի տուգանային տոկոս, որը հավասար է չկատարված պարտավորության ժամանակահատվածում եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույքին՝ հավելած երեք տոկոս,

9. Մերժում է արդարացի բավարարման հետ կապված դիմողի պահանջի մնացած մասը:

Կատարվել է անգլերենով և Դատարանի կանոնների 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ գրավոր հրապարակվել է 2003 թվականի դեկտեմբերի 11-ին: